ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

АРХИТЕКТУРНЫЕ ПАМЯТНИКИ СОВЕТСКОЙ АРМЕНИИ

ARCHITECTURAL MONUMENTS IN THE SOVIET ARMENIA

ԳՄԴ 85.113(2Հ)1
Ս 752

Հեղինակ-կազմող՝ ԳԱՌՆԻԿ ՍՄԲԱՏԻ ՇԱԽԿՅԱՆ

Автор-составитель — ГАРНИК СМБАТОВИЧ ШАХКЯН

The author-compilep — GARNIK S. SHAKHKIAN

Մասնագիտական խմբագիր՝
ճարտարապետության դոկտոր Ս. Խ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Спец. редактор —
доктор архитектуры С. Х. МНАЦАКАНЯН

Specialist editor —
doctor of architecture S. KH. MNATSAKANIAN

Թարգմանիչներ՝ Մ. Վ. Սահակյան
Ռ. Թ. Գարգալոյան

© «Պարբերական» արտադրահրատարակչական միավորում, 1989

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

АРХИТЕКТУРНЫЕ ПАМЯТНИКИ СОВЕТСКОЙ АРМЕНИИ
ARCHITECTURAL MONUMENTS IN THE SOVIET ARMENIA

ՈՒՂԵՑՈՒՅՑ · ПУТЕВОДИТЕЛЬ · GUIDEBOOK

«Պարբերական» արտադրահրատարակչական միավորում
ԵՐԵՎԱՆ 1989
ИПО «Парберакан»
ЕРЕВАН 1989

«Եթե ինձ հարցնեն, թե մեր մոլորակի վրա որտեղ կարելի է հանդիպել առավել շատ հրաշքների, ես առաջին հերթին կտամ Հայաստանի անունը... Ակամայից զարմանում ես, որ աշխարհի այդպիսի մի փոքրիկ անկյունում կարելի է հանդիպել այնպիսի հուշարձանների և այնպիսի մարդկանց, որոնք կարող են լինել ամբողջ աշխարհի զարդն ու հպարտությունը»:

ՌՈՔՈՒԵԼ ՔԵՆՏ

Ամերիկյան նկարիչ և գրող, «Ժողովուրդների միջև խաղաղության ամրապնդման» միջազգային Լենինյան մրցանակի դափնեկիր

Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը Սովետական Միության 15 իրավահավասար և լիաբուռն կյանքով ապրող եղբայրական հանրապետություններից մեկըն է՝ տարածությամբ ամենափոքրը (29,8 հազ. քկմ), բնակչությամբ 12-րդը (3,4 մլն.): Այն զբաղեցնում է Հայկական լեռնաշխարհի հյուսիսարեվելյան մասը, որի կենտրոնում տարածվում է Արարատյան հարթավայրը՝ հնուց անտի հանդիսանալով հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական և մշակութային օրրանը: Պատահական չէ, որ հենց այդտեղ են տեղադրվել Հայաստանի հին ու նոր մայրաքաղաքներ Արմավիրը, Արտաշատը, Երվանդաշատը, Վաղարշապատ—Էջմիածինը, Դվինը, Էրեբունի—Երևանը: Սովետական Հայաստանի տարածքի գրեթե 2/3-ը ցանքերի և մշակման համար անօգտագործելի է: Այն 1/3-ն էլ, որ օգտագործվում է, հնարավոր է դարձել անասելի ջանքերի և հսկայական ներդրումների շնորհիվ: Դրա համար է, որ հայերը, ինչպես ասում են, «քարից հաց են քամում»: Ավանդությունն ասում է, որ երբ հայերը ներկայացել են աստծուն իրենց բաժին հողը ստանալու, այն արդեն բաժանված է եղել, և նրանց հասել են միայն քարքարոտ հողակտորները: Հայը շունչ ու ոգի է դրել քարի մեջ, նրանով արտահայտել իր երազանքները, նվիրական զգացումները, նաև նրանով ճանաչվել, նրանով հարատևել...

Սովետական Հայաստանի ողջ տարածքով մեկ սփռված են մեկը մյուսից զարմանահրաշ, քարակերտ հուշարձաններ, որոնց թիվն անցնում է 40.000-ից: Բայց որքա՜ն էլ գտնվում են հանրապետությունից դուրս՝ պատմական Հայաստանի բնիկ հայկական բնակավայրերում, և ինչպիսի՜ հուշարձաններ, մարդկային հրաշագործ մտքի, շռայլ ոգու և հուժկու բազուկների ինչպիսի՜ կերտվածքներ. Անի, Աղթամար, Խծկոնք, Հոռոմոս, Բագավան, Բագարան, Մրեն, Տեկոր... ո՞ր մեկը թվես:

Ով ասես չի ձգտել նվաճել Հայաստանը՝ ասորեստանցիները, հռոմեացիները, բյուզանդացիները, պարսիկները, արաբները, սելջուկները, մոնղոլները, թուրքերը... Հայ ժողովուրդն իր բազմադարյան պատմության քառուղիներում մշտապես ենթարկվել է օտարերկրյա բռնակալների ավերին և ասպատակություններին, սակայն ամենափոքր իսկ հնարավորություններն օգտագործվել են վերականգնելու, նորոգելու ավերածը, կառուցելու նորերը՝ է՜լ ավելի շքեղ, է՜լ ավելի առինքնող: Դրանով է պայմանավորված, որ երկրաշարժերի ակտիվ գործունեության գոտում գտնվող և դարեր շարունակ պետականությունից զուրկ Հայաստա-

նում՝ դիմագրավելով թշնամական ավերը, ժամանակի ու մոռացումի վտանգը, մեզ է հասել դարերի խորքից եկող մի վիթխարի ժառանգություն: Հիրավի, «թանգարան բաց երկնքի տակ»...

Հայ ճարտարապետության հուշարձանները՝ կանգուն, թե կիսավեր, իրենց գիտական ու գեղարվեստական բարձր արժանիքներով, ազգային վառ գունեղությամբ, վաղուց դուրս են եկել հայկական շրջանակներից, արժանացել համընդհանուր ճանաչման և բարձր գնահատանքի, դարձել Անդրկովկասի և Առաջավոր Ասիայի պատմության ու մշակույթի ուսումնասիրման կարևոր աղբյուրներից մեկը: Հայաստանում են ծնվել ճարտարապետականգեղարվեստական և կառուցքային շատ հորինվածքներ, ձևեր ու հնարքներ, որոնք տարածվել են նաև Հայաստանին հարևան և նրա հետ տնտեսական ու մշակութային հարաբերությունների մեջ գտնվող երկրներում: Եվ այսօր արժեքավոր են այդ հարաբերությունների իմացության, մշակութային կապերի և փոխազդեցությունների բացահայտման տեսանկյունից:

Հայ ժողովրդի ճարտարապետության ամենանշանակալից վերելքը տեղի ունեցավ Հայաստանում սովետական կարգերի հաստատումից (1920 թ. նոյեմբեր) հետո: Հայ ճարտարապետության օրգանական մասը կազմող սովետահայ ճարտարապետությունը մեր հերոսական դարաշրջանի փառավոր տարեգրությունն է, հայ ժողովրդի շինարարական ոգու և ստեղծագործական հանճարի օրինական կրողը:

Պատահական չէ, որ այսօր մեր հանրապետությունը դեպի իրեն է ձգում ոչ միայն Հայաստանի անցյալն ու պատմությունը ներկայացնող հուշարձաններով, այլև ժամանակակից հայ ճարտարապետության նվաճումներով:

Բնականաբար, դժվարին խնդիր է նմանօրինակ փոքր ծավալի շրջանակներում ներկայացնել Սովետական Հայաստանի տարածքի բազմահազար ճարտարապետական հուշարձանները՝ թեկուզև առավել կարևորները (որոնց թիվը նույնպես հազարների է հասնում): Ուստի աշխատել ենք դրանք ներկայացնել առավելապես ընդհանուր գծերով, սեղմ բնութագրումներով, շեշտելով առանձնահատուկ կողմերը, ճարտարապետական-գեղարվեստական արժանիքները:

Սույն ուղեցույցը հասցեագրվում է Սովետական Հայաստանի հյուրերին: Այն, կարծում ենք, կօգնի հանրապետությունում շրջագայության ընթացքում հարստացնելու իմացությունը Սովետական Հայաստանի ճարտարապետական հուշարձանների վերաբերյալ, հնարավորություն կտա կողմնորոշվելու տուրիստական երթուղիներ ընտրելու ժամանակ:

Սովետական Հայաստանի հյուրերին բարի երթ ենք մաղթում սովետական նշանավոր գրող Նիկոլայ Տիխոնովի խոսքերով. «Կյանքում գեթ մեկ անգամ պետք է լինել Հայաստանում: Այնտեղ յուրաքանչյուրին սպասում են հայտնություններ և հրաշքներ, որոնք խոր հետք կթողնեն նրա ողջ գործունեության վրա... Եվ նա, ով կամենում է ապրել անմոռանալի շատ պահեր, թող, ինչպես հին ժամանակներում, ոտքով կտրի Հայաստան երկիրը... Արածի համար չի զղջա»:

Հայաստանը աշխարհի հնագույն պետություններից է՝ Ասորեստանի, Բաբելոնի, Մարաստանի, Պարթևստանի, Պարսկաստանի, Հունաստանի, Հռոմի հասակակիցը: Եվ զարմանալի չէ, որ նրա տարածքում հայտնաբերված նյութական մշակույթի վաղագույն նմուշներն ունեն շուրջ 6000 տարվա հնություն: Դրանք Հայկական բարձրավանդակում ապրող ցեղախմբերի շինարարական գործունեության արդյունք հանդիսացող քարեդարյան անձավներն են, պղնձեդարյան և բրոնզեդարյան կացարանները, մեծաքարե կառույցները, ժայռապատկերները, դամբարանադաշտերը, ամրոց-բնակատեղիները, բերդշեները: Սովետական Հայաստանի տարածքի հնագույն բնակավայրերի մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Երևանի հարավարևմտյան մասում՝ Հրազդան գետի ափին բացված Շենգավիթի ամրոց-բնակատեղին (մ. թ. ա. IV—II հազարամյակներ): Այն շրջանաձև հատակագիծ ունեցող կացարանների յուրահատուկ հորինվածքով, ամրաշինական, տնտեսական կառույցներով, չորս հաջորդական ժամանակաշրջանների մշակութային հարուստ շերտերով հստակ պատկերացում է տալիս

հազարամյակներ առաջ այդտեղ բնակեցված համայնքի անընդմեջ գործունեության մասին:

Անդրկովկասի լեռնամետաղաձուլական հնագույն կենտրոններից է Էջմիածնի շրջանի Տարոնիկ գյուղից ոչ հեռու գտնվող Մեծամորի ամրոց-բնակատեղին (մ. թ. ա. III—I հազարամյակներ), որի արտադրական, պաշտամունքային շինությունները, կացարանները, հնագիտական առատ նյութը վկայում են հազարամյակներ առաջ Մեծամորում մետաղի ձուլման գործի դրվածքի, մշակույթի, արհեստագործության, շինարվեստի զարգացման բարձր մակարդակի մասին: Ուշագրավ են աստղագիտական նշանակության գտածոները: Ուսումնասիրությունների արդյունքներով հավաստվում է, որ մ. թ. ա. 2800—2600 թվականներին այդտեղ դիտարկվել է ամենապայծառ աստղի՝ Սիրիուսի ծագումը (որի երևան գալը կապվել է նոր տարվա սկզբի հետ և երկրպագվել): Ի դեպ, Հին Հայաստանում աստղագիտության զարգացման մասին է ասում նաև դեռևս մ. թ. ա. 2492 թվականից Հայոց շարժական (1084 թվականից՝ անշարժ) տոմարի գոյությունը:

Նույն դարաշրջանի արդյունք են Արագած լեռան լանջերին և Սևանի ավազանում հայտնաբերված բերդշեները (Հոռոմ, Թղիթ, Գառնահովիտ, Լճաշեն, Ծաղկահովիտ, Սառնաղբյուր, Մոտկանաբերդ), որոնք իրականացված են խոշոր անմշակ քարերից՝ կիկլոպյան կոչվող շարվածքով:

Ամրոց-բնակատեղիները և բերդշեները աչքի են ընկել իրենց բնական և արհեստական պաշտպանական համակարգերով՝ տեղադրվել են գետերով և կիրճերով եզերված անառիկ բլուրների և ժայռազանգվածների վրա, շրջափակվել բուրգերով և աշտարակներով ուժեղացված պարիսպներով, ունեցել են ստորգետնյա գաղտնուղիներ:

Բրոնզի և նոր քարե դարաշրջաններում Հայկական բարձրավանդակում լայն տարածում գտան մեծաքարե (մեգալիթյան) կառույցները՝ մենաքարերը, կրոմլեխները, դոլմենները (Սիսիանի Զորաց դաշտ, Շամիրամ, Օշական): Դրանց շարքին են դասվում իրենց տեսակի մեջ եզակի «վիշապներ» կոչվող կոթողները՝ կերտված միակտոր քարից (մինչև 5 մ երկարությամբ) ձկան տեսքով՝ պատված խորհրդանշական պատկերներով: Հանդիսանալով ջրի պաշտամունքը կերպավորող կուռքեր, դրանք հայտնաբերվել են աղբյուրների ակունքների, ջրանցքների, ջրամբարների մերձակայքում (Գեղամա լեռներում, Սևանա լճի հյուսիսարևելյան ափին, Արագածի լանջերին):

Մ. թ. ա. I հազարամյակում են կազմավորվել և ծաղկում ապրել այնպիսի հնագույն, մեծարժեք ճարտարապետական համալիրներ, ինչպիսիք են՝ Էրեբունին (Արին Բերդ), Թեյշեբաինին (Թեշիբաինի, Կարմիր Բլուր), Արգիշտիխինիլին: Բաղկացած լինելով ամրոցից և բնակատեղիից, դրանք ունեցել են ուղղագիծ կանոնավոր հատակագիծ, աչքի ընկել կառուցապատման և փողոցային ցանցի հստակ համակարգով: Էրեբունիի և Թեյշեբաինիի մնացորդները գտնվում են Երևան քաղաքի տարածքում, իսկ Արգիշտիխինիլիինը՝ Հոկտեմբերյանի շրջանի Նոր Արմավիր և Հայկավան գյուղերին մերձակա բարձունքների վրա:

1950 թվականին Էրեբունիի պեղումների ժամանակ գտնվեց Երևանի ծննդյան վկայագիրը, որը մոտ 3000-ամյա լռությունից հետո սկսեց խոսել սեպագրերի լեզվով՝ հավաստելով, որ Էրեբունին հիմնադրվել է մ. թ. ա. 782 թվականին Արգիշտի Ա թագավորի կողմից. «Խալդի աստծո մեծությամբ Արգիշտին, Մենուայի որդին, այս հոյակապ ամրոցը կառուցեց, անվանեց Էրեբունի, ի հզորություն Բիայնիլիի, ի սարսափ թշնամիներին» (սեպագիր արձանագրություն-վկայագրի կրկնօրինակը կարելի է տեսնել Լենինի հրապարակին հարող մասում): Նշանակում է մայրաքաղաք Երևանն արդեն 2770 տարեկան է: 1968 թ. հանդիսավորապես նշվեց նրա ծննդյան 2750-ամյակը, և այդ առիթով հենց ամրոցի մատույցներում ստեղծվեց պեղումներով հայտնաբերված նյութերն ու Էրեբունիի հարուստ պատմությունն ամփոփող հիանալի թանգարան: Ամրոցին ծանոթանալուց առաջ անպայման այցելեք մշակույթի այդ կարևոր օջախը:

Էրեբունին տարածված է Արին Բերդ բլրի շուրջը, որի գագաթին պահպանվել է պարսպապատ միջնաբերդը՝ եռանկյունաձև շրջագծով: Այն բաղ-

կացած է եղել որոշակիորեն արտահայտված պալատական, պաշտամունքային և տնտեսական մասերից: Ուշագրավ է, որ հանդիսավոր, պաշտոնական հարկաբաժինը բացվել է դեպի Արարատ և Արագած լեռների համայնապատկերը: Էրեբունիում կյանքը շարունակվել է գրեթե անընդմեջ՝ ընդհուպ մինչև ժամանակակից Երևանը, որը ժառանգել է ոչ միայն նրա հարուստ և բազմաբովանդակ մշակույթը, ավանդույթները, այլև անվանումը՝ Էրեբունի—Երևան անցման ճանապարհով (վերջինս, իհարկե, չի սպառնում աստվածաշնչյան այն ավանդության գոյությանը, ըստ որի երբ Նոյ նահապետը փրկվելով համաշխարհային ջրհեղեղից, Արարատի գագաթից առաջին անգամ ցամաք է տեսնում, ուրախությունից բացականչում է՝ «երեվա՛ց»: Այդտեղից էլ՝ Երևան անունը):

Եթե Էրեբունին եղել է ռազմավարչական կենտրոն, ապա Թեյշեբաինին (մ. թ. ա. VII—VI դարեր) առավելապես ունեցել է տնտեսական նշանակություն, որի մասին են վկայում երկհարկանի միջնաբերդի առաջին հարկաբաժիններում բացված պահեստային շինությունները, մթերանոցները, արհեստանոցները: Զարմանք են պատճառում գինու մառանների ընդարձակությունը և հսկայական տարողությամբ (700—900 լ) կարասների առատությունը: Դա ցույց է տալիս, որ դեռևս մ. թ. ա. IX—VII դարերում Հայաստանում այգեգործությունը և գինեգործությունը զարգացման բարձր մակարդակի վրա են գտնվել: Այդ մասին վկայում են նաև ասորական սեպագիր արձանագրությունները, հին հույն պատմիչներ Հերոդոտի, Քսենեփոնի, Ստրաբոնի, V դարի հայ պատմիչ Ագաթանգեղոսի հիշատակությունները, գինու և չորացված մրգեղենի մեծ չափով արտահանման մասին տեղեկությունները: Այդ բարձր մակարդակի արտահայտություն են Գառնիի, Դվինի, Զվարթնոցի քանդակները և, հատկապես, Ախթամարի տաճարի պատկերագրության մեջ տեղ գտած այգեմշակման, գինու պատրաստման, թագավորական խնջույքի և այլ տեսարանները:

Թեյշեբաինիի կործանման պատճառը բացի սկյութների և բնիկ ցեղերի ավերումներից եղել է, թերևս ավելի շատ, հրդեհը, որի մոխիրների տակ պահպանվել է հնագիտական այն հարուստ նյութը (այդ թվում՝ գարու, վարսակի, ցորենի, խաղողի, պտուղների և այլ մնացորդներ, որոնք սովորական պայմաններում կարող էին չպահպանվել), որ երևան եկավ 1939—1970 թթ. պեղումների ժամանակ (այդ իմաստով Թեյշեբաինին մի յուրահատուկ «Հայկական Պոմպեյ» է):

Արգիշտիխինիլին (հիմնադրված մ. թ. ա. մոտ 776 թ.)՝ ի տարբերություն Էրեբունիի և Թեյշեբաինիի, ունեցել է երկու միջնաբերդ եռաշարք պարիսպներով: Քաղաքի պաշտպանական, պալատական, պաշտամունքային և տնտեսական կառույցների մասին տվյալներ են պարունակում քաղաքի հիմնադիր նույն Արգիշտի Ա թագավորի և նրա հետնորդների մեծաթիվ սեպագիր արձանագրությունները:

Հնագույն հայկական դարաշրջանի շինարարական շատ ավանդույթներ, քաղաքաշինական և կառուցողական ձևեր՝ հատկապես քարի մշակման բարձր կուլտուրան, բնակավայրի տեղի ընտրության և հարմարեցման ուսանելի փորձը փոխանցվեցին հայ ճարտարապետության հաջորդ փուլեր:

Մ. թ. ա. VII—VI դարերում Երվանդունիների հայկական պետական կազմավորմամբ հայ ժողովուրդը թևակոխեց տնտեսական և մշակութային զարգացման նոր շրջան, որը սակայն խաթարվեց՝ երկիրը սկզբում Մարաստանի, ապա Պարսկաստանի կողմից նվաճվելու հետևանքով:

Այդ դարաշրջանի հայկական գյուղական տների մասին պատկերացում են տալիս Քսենեփոնի տեղեկությունները, որոնց համաձայն Հայաստանի հարավային շրջաններում տները եղել են աշտարակաձև, իսկ հյուսիսում՝ գետնափոր, ծածկի մեջ ունենալով բացվածք, որտեղից թափանցում էր լույսը, և մարդիկ ներսուդուրս էին անում դնովի աստիճաններով (խոսքը վերաբերում է հազարաշեն կոչվող ժողովրդական բնակելի տան՝ գլխատան պարզունակ, դեռևս անկատար նախօրինակներին):

Մ. թ. ա. III դ. վերջին տասնամյակներում Հայաստանը մտավ Սելևկյան պետության կազմի մեջ, որով ակտիվորեն ներքաշվեց հելլենիստական մշա-

կույթի ազդեցության ոլորտը: Հայկական պետականությունը վերականգնվեց Արտաշեսյանների հարստության հիմնադիր Արտաշես Ա թագավորի (մ. թ. ա. 189—160 թթ.) ժամանակ: Հայաստանը վերելք ապրեց հատկապես Տիգրան Մեծի թագավորության տարիներին (մ. թ. ա. 95—55 թթ.)՝ դառնալով Հին աշխարհի առաջնակարգ երկրներից մեկը:

Այդ շրջանում հատկապես ծաղկում ապրեց քաղաքաշինությունը: Հիմնադրվեցին Արտաշատ, Արմավիր, Երվանդաշատ, Տիգրանակերտ, Վաղարշապատ և այլ քաղաքներ, որոնց հորինվածքներում դրսևորվում են հելլենիստական քաղաքաշինության սկզբունքները: Պլուտարքոսի և Ստրաբոնի տեղեկությունների համաձայն՝ Արտաշատ քաղաքի («Հայաստանի Կարթագեն») տեղի ընտրությանը և հիմնադրմանը մասնակցել է Հայաստանում ապաստանած Կարթագենցի զորավար Հաննիբալը: Տիգրանին փոխարինած նրա որդի Արտավազդ Բ-ն (մ. թ. ա. 55—34 թթ.) հելլենիստական մշակույթի խոշոր ներկայացուցիչ էր: Պլուտարքոսի վկայությամբ նա ճառերի, ողբերգությունների և պատմական երկերի հեղինակ էր: Տիգրանակերտում և Արտաշատում գործել են հունական տիպի թատրոններ: Պարթևական թագավորության հետ մ. թ. ա. 53 թ. կնքված դաշինքի առիթով կազմակերպված հանդիսության ժամանակ Արտաշատ մայրաքաղաքում հունարեն լեզվով բեմադրվել է Էվրիպիդեսի «Բաքոսուհիներ» ողբերգությունը:

Արտաշատ և Արմավիր քաղաքների վերջին տասնամյակներում կատարված պեղումները ի հայտ բերեցին ճարտարապետական, հնագիտական, մոնումենտալ արվեստին վերաբերող առատ նյութ, ընդլայնելով պատկերացումները Հայաստանում հելլենիստական մշակույթի տարածման շրջանակների մասին, նյութականացնելով այդ քաղաքների վերաբերյալ մատենագրական տեղեկությունները:

Հելլենիստական դարաշրջանի կարևորագույն հուշարձաններից է Աբովյանի շրջանի Գառնի գյուղի ամրոցը (մ. թ. ա. III—II դարեր), որն, ինչպես տեղեկացնում է պատմահայր Մովսես Խորենացին (V դ.), հանդիսացել է Արշակունիների արքունական ամառանոցը: Այն ներշնչող և վեհացնող տպավորությունը, որ ստացվում է Գառնիի ճանապարհին՝ Գեղամա նախալեռների բարձունքներից դեպի ձյունափառ Արարատները բացվող տեսարանից (շրջանակված Չարենցի կամարով ու չարենցյան նվիրական խոսքերով՝ «Աշխարհ անցիր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա...»), շարունակում է ուղեկցել Գառնի այցելողներին նաև Գառնիի միջավայրում:

Ամրոցը տեղադրված է գեղատեսիլ եռանկյունաձև հրվանդանի վրա, որը երկու կողմից պաշտպանված է խոր կիրճերով, իսկ հյուսիսային կողմից շրջափակված է բազալտե հսկայական բլոկներից շարված ամրակուռ պարիսպներով: Ներսում գտնվում են հեթանոսական տաճարը, արքունական պալատի, բաղնիքի, բնակելի հարկաբաժինների մնացորդները, որոնցից առավել արժեքավորը տաճարն է՝ Սովետական Միության տարածքում ամբողջական ձևով պահպանված եզակի անտիկ հուշարձանը: Ամրոցի որմնաքարերից մեկի հունարեն արձանագրության համաձայն այն կառուցվել է 77 թվականին՝ բարենորոգչական և շինարարական գործունեությամբ աչքի ընկած, Արշակունիների հարստության հիմնադիր Տրդատ Ա թագավորի կողմից: Պերիպտեր տիպին պատկանող տաճարի չորս ճակատները եզերված են հունական օրդերային սյունաշարերով, հարդարված բազմաբնույթ, անկրկնելի, հմայիչ զարդաքանդակներով, որոնք իրենց պլաստիկությամբ, հյութեղությամբ, կենսալիությամբ, թվում է, ոչ թե քանդակված են, այլ ձուլված կամ ծեփված:

Տաճարն ավերվել է 1679 թ. ահեղ երկրաշարժից: Փլատակներից մաքրվել է 1909—1911 թվականներին ակադեմիկոս Ն. Մառի ղեկավարությամբ: 1930-ական թվականներին ճարտարապետ Ն. Բունիաթյանը կազմել է վերակազմության նախագիծը: Մոտ 300 տարի գտնվելով ավերակ վիճակում, այն այսօր այցելուներին հառնում է իր ողջ վեհությամբ՝ շնորհիվ 1969—1974 թթ. վերականգնման, որ իրա-

կանացվել է ճարտարապետ Ա. Սահինյանի վերակազմությամբ և մասնագիտական հմուտ ղեկավարությամբ:

Գառնիի տաճարի գեղարվեստական արտահայտչականության ուժը ոչ միայն ճարտարապետական և կառուցքային ճշմարիտ ձևերի, այլև ընդհանուր հորինվածքում և առանձին մանրամասերում գոյություն ունեցող համաչափական և համամասնական ներդաշնակ կապի մեջ է: Այդ կապի հիմքում ընկած է անտիկ աշխարհում լայնորեն տարածված «ոսկե հատման» հարաբերությունը (Ա. Սահինյան):

Հորինվածքային ձևերի համաչափական կապի հատկանիշը փոխանցվելով սերնդից սերունդ, կազմել է հայ ճարտարապետության բնութագրական կողմերից մեկը՝ ցայտուն դրսևորումներ գտնելով հատկապես VII դ. գմբեթավոր եկեղեցիներում և X—XIII դդ. վանքային համալիրներում:

Քաղաքացիական ճարտարապետության վաղագույն, ուշագրավ օրինակներից է Գառնիի բաղնիքը, որը բաղկացած է եղել հինգ բաժնից (նախասրահ-հանդերձարան, լողարաններ և ջեռուցարան): Այն հատկապես արժեքավորվում է շնորհիվ նախասրահ-հանդերձարանի հատակի խճանկարի, որի թեման վերցված է հունական դիցաբանությունից: Խճանկարն ունի հունարեն խորհրդավոր մակագրություն. «Աշխատեցինք՝ ոչինչ. չստանալով»:

Գառնիի միջավայրը ճարտարապետական և բնական հուշարձանների մի հիասքանչ բույլ է՝ ներկայացված, բացի բուն Գառնիի հուշարձաններից, Գեղարդով, Հավուց Թառի Ամենափրկիչով, Աղջոց վանքով և, իհարկե, հռչակավոր «Խոսրովի անտառով» (ներկայումս՝ Խոսրովի պետական արգելոց): Վերջինս Գառնիի կրտսեր ժամանակակիցն է, հիմնադրված Խոսրով Բ Կոտակ թագավորի (332—338 թթ.) կողմից, որպես որսազվարճության և ռազմական վարժանքների վայր: Արգելոցն իր անկրկնելի բնությամբ, կենդանական և բուսական հազվագյուտ տեսակներով ստացել է արժանի ճանաչում:

Մ. թ. ա. VI դարից մինչև մ. թ. ա. III դարն ընկած ժամանակի հայ մշակույթը հանդիսացավ այն հուսալի և ամուր պատվանդանը, որի վրա բարձրացավ միջնադարյան Հայաստանի կենսահաստատ և ինքնատիպ արվեստը:

301 թ. Հայաստանը քրիստոնեությունն ընդունեց որպես պետական կրոն: Այդ փաստը դիտվում է որպես ոչ այնքան կրոնական, որքան սոցիալ-քաղաքական իրողություն, որը կարևոր նշանակություն ունեցավ երկրում պետականության հաստատման, տնտեսության ու մշակույթի զարգացման համար: Նոր պաշտամունքի անհրաժեշտությամբ պայմանավորված, սկզբնավորվեցին մոնումենտալ հայ ճարտարապետության առաջնակարգ շատ ստեղծագործություններ:

Մի կողմից հարևան պետությունների՝ Պարսկաստանի, Բյուզանդիայի, Արաբական խալիֆության դեմ կենաց ու մահվան պայքար, մյուս կողմից՝ ազգային ինքնագիտակցության, ազգային ոգու անխաթար պահպանման ճիգեր՝ ահա թե ինչով է բնութագրվում այդ ժամանակաշրջանը: Եվ ոչինչ այնպես սատար չեղավ հայ ժողովրդին այդ ծանր պայքարում, ինչպես 405 թվականին Մեսրոպ Մաշտոցի կողմից արված հայ գրերի գյուտը, որը հանդիսացավ նաև առաջադիմության հզոր ազդակ մտածողության և ստեղծագործական գործունեության բոլոր բնագավառներում: Դրա խոսուն վկաներն են Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի մոտ 14 հազար հայերեն ձեռագիր-գանձերը, այդ թվում՝ V—XVIII դարերի պատմագրական, փիլիսոփայական, մաթեմատիկական, աշխարհագրական, բժշկական և այլ բնույթի բազմաթիվ գլուխգործոցներ, որոնք անցել են դարը փորձությունների երկար ու դժվարին ճանապարհ՝ բաժանելով հայրենի ժողովրդի ճակատագիրը: Ձեռագրական հավաքածուներում շատ կան Հին աշխարհի և միջնադարի հունական, ասորական, սիրիական և այլ գրչությունների թարգմանական հուշարձաններ, որոնց մի մասի բնօրինակները չեն պահպանվել, և դրանք հայտնի են միայն հայերեն թարգմանություններով:

Մատենադարանը լոկ ձեռագրերի և մատյանների հավաքածու-պահոց չէ, այն միաժամանակ գիտահետազոտական և մշակութային բուռն կյանքով

ապրող հաստատություն է: Նրա շենքի առջև Մ. Մաշտոցի արձանն է՝ հայ այբուբենի երկաթագիր տառերով, ձախակողմյան ֆոնի վրա փորագրված է հայերեն գրված առաջին նախադասությունը. «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»:

Վաղ ֆեոդալական դարաշրջանի քաղաքաշինության ուշագրավ օրինակ է Հայաստանի հնագույն մայրաքաղաք Դվինը, որի մնացորդները գտնվում են Արտաշատի շրջանում: Քաղաքը բաղկացած է եղել միջնաբերդից, բուն քաղաքից և արվարձաններից: Միջնաբերդը, որտեղ գտնվել է Արշակունի թագավորների պալատը (IV դ.), շրջափակվել է ջրախանդակով պաշտպանված հաստահեղույս կրկնակի պարիսպներով: Նրանցից արևմուտք գտնվել է կենտրոնական թաղամասը՝ կաթողիկոսական պալատով, եկեղեցիներով և օժանդակ շինություններով: Հայտնաբերված բազմաբնույթ, արժեքավոր արհեստագործական իրերը, զարդեղենը, կահկարասին, քանդակները, կոթողները, դրամները վկայում են քաղաքի երբեմնի մշակութային և սոցիալ-տնտեսական բուռն կյանքի մասին:

IV—V դարերը բնութագրվում են հիմնականում հայ մոնումենտալ ճարտարապետության ազգային նկարագրի որոնման և կազմավորման ճիգերով: Այդ դարերի պաշտամունքային ճարտարապետությունը առավելապես ներկայանում է միանավ (Լեռնակերտ, Թանահատ, Կառնուտ, Գառնի, Կուրթան, Օձուն, Գյուլագարակ, Ջառջառիս, Փարպի) և եռանավ (Երերույք, Քասաղ, Աշտարակ, Դվին, Եղվարդ, Աղց, Կողբ) դահլիճային եկեղեցիներով, որոնք հանդես են գալիս բազմաթիվ տարբերակներով:

Եռանավ դահլիճների մի մասը (Երերույք, Աշտարակ, ենթադրվում է նաև Դվինը) ունեցել է այսպես կոչված «բազիլիկային կտրվածք», այսինքըն միջին նավը բարձր է եղել եզրայիններից և ծածկվել է առանձին: Մյուսներում (Քասաղ, Աղց, Կողբ, Եղվարդ) երեք նավն էլ առնվել են ընդհանուր երկթեք կտուրի տակ («արևելյան տիպ»): Այդ տիպի եկեղեցիների գագաթը և, ընդհանրապես, վաղքրիստոնեական ճարտարապետության հանգուցային հուշարձաններից մեկը Անիի շրջանի Անիպեմզա ավանի եզրին գտնվող Երերույքի բազիլիկն է (V դ), որը, բացի արևելյան զույգ ավանդատներից, մեկական կրկնահարկ սենյակներ ունի արևմտյան անկյունային մասերում և երեք կողմից եզերված է եղել բաց սյունասրահներով: Հուշարձանը գերում է իր կուռ և ներդաշնակ հորինվածքով, ճակատների զուսպ և տպավորիչ մշակումներով:

Բացի դահլիճային տիպի եկեղեցիներից IV—V դարերում Հայաստանում կառուցվում էին նաև գմբեթավոր եկեղեցիներ (Էջմիածնի Մայր տաճար, Ողջաբերդ, Շաղաթ, Տեկոր), սակայն դրանց «զանգվածային» շինարարությունը սկսվել է VI—VII դարերից, երբ հայ մոնումենտալ ճարտարապետությունն ապրում էր իր հասունության և կատարելության հաստատման դարաշրջանը:

Հայ քանքարաշատ վարպետները գմբեթի հենարանային համակարգի բազմապիսի հուսալի լուծումներ են գտել: Լայնորեն տարածված գմբեթավոր բազիլիկներում (Օձուն, Գայանե, Կումայրի) և դրանց եռախորան տարբերակներում (Դվին, Թալին) գմբեթի ծանրությունն իրենց վրա են վերցնում աղոթասրահի միջին մասում առանձին կանգնած չորս հզոր հենարանները: Օձունի և Գայանեի եկեղեցիները իրենց կուռ և պատճառաբանված հորինվածքով դասական կատարելության նմուշներ են: Թալինի եկեղեցին տպավորիչ է իր գեղարվեստական հատկանիշներով, հարդարանքի պերճությամբ և աշխարհիկ ոգով:

Գմբեթակիր հենարանները աղոթասրահը տրոհելով մասերի, նեղացնում էին ծիսակարգի ունկընդրման պայմանները: Այդ «պակասությունից» զերծ են զուտ հայկական երևույթ հանդիսացող գմբեթավոր դահլիճները (Զովունի, Պտղնի, Արուճ, Դդմաշեն), որոնցում գմբեթը հենվում է երկայնական պատերին կից որմնամույթերի վրա: Լայն ճանաչում ունեն Պտղնիի և Արուճի եկեղեցիները, որոնցից առաջինն արժեքավորվում է հատկապես գեղարվեստական հարդարանքով, երկրորդը՝ ներքին տարածության վեհությամբ, խորանի բարձրարվեստ որմնանկարներով, որոնք Թալինի, Լմբա-

տավանքի, Կոշի, Զորավարի և այլ հուշարձանների որմնանկարների հետ մեկ անգամ ևս հերքում են այն կարծիքը, թե որմնանկարչությունը վաղմիջնադարյան Հայաստանում տարածում չգտած բնագավառ է:

Գմբեթավոր դահլիճի հորինվածքը, լինելով վաղմիջնադարյան պաշտամունքային շենքերի շատ տարածված և կենսունակ տիպերից, լայնորեն կիրառվեց նաև միջնադարի հետագա փուլերում:

Հայկական հնագույն կենտրոնագմբեթ եկեղեցին Էջմիածնի Մայր տաճարն է՝ համայն քրիստոնեական ճարտարապետության հանգուցային հուշարձաններից մեկը: Ըստ մատենագրական տեղեկությունների (Ագաթանգեղոս, Ղազար Փարպեցի) այն կառուցվել է Տրդատ Գ թագավորի և Գրիգոր Լուսավորչի կողմից (հիմնովին վերականգնվել է 484 թ. Հայաստանի կառավարիչ Վահան Մամիկոնյանի օրոք): Մայր տաճարի կառուցումով հիմք դրվեց հոգևոր և կրթամշակութային այն կարևոր օջախին, որը կոչված էր անփոխարինելի դեր կատարելու հայ ժողովրդի ճակատագրում: Հայկական հողի վրա դեռևս V դարում Էջմիածնում՝ Մայր տաճարի հովանու տակ են ծնվել մեսրոպատառ առաջին դպրոցը, առաջին մատենադարանը, առաջին գրչության կենտրոնը, հետագայում՝ առաջին տպարանը... Մայր տաճարի միջավայրում են կառուցվել հայ ճարտարապետության ամենաաչքի ընկնող հուշարձանները՝ Զվարթնոցը, Հռիփսիմեն, Գայանեն: Էջմիածինը դարեր շարունակ հանդիսացավ պետականությունից զուրկ և աշխարհով մեկ ցրված հայերի հոգևոր-գաղափարախոսական կենտրոնը, հայապահպանման նեցուկը, հայ ժողովրդի ինքնաճանաչման ու ինքնահաստատման զորեղ ուժը:

Մայր տաճարը հատակագծում պայտաձև խորաններով քառակուսի է, որի միջին մասում գմբեթակիր չորս մույթերն են: Այդ հորինվածքը փոքր-ինչ ավելի ուշ կիրառություն գտավ նաև Բագարանի Ս. Թեոդորոս եկեղեցում (624—631 թթ.): Էջմիածին-Բագարան գմբեթակիր չորս մույթերով քառախորան տիպը արևմտաեվրոպական գիտնականների (Հ. Ստրժիգովսկի, Ջ. Դիմիտրոկալիս, Վ. Արսլան) կարծիքով փոխանցվել է Եվրոպա՝ իր կնիքը դնելով մի շարք հուշարձանների (Կոստանդնուպոլսի Նեա, Միլանի Սան Սատիրո, Ֆրանսիայի Ժերմինի դե Պրիե) հորինվածքի վրա:

Կենտրոնագմբեթ հուշարձանների ամենատարածված և բազմազան հորինվածքներով հանդես եկող օրինակները դրսից և ներսից խաչաձև հատակագծով փոքրաչափ եկեղեցիներն են՝ միախորան (Շենիկ, Բուժական, Կարմրավոր, Բջնի, Արտաշավան, Լմբատավանք, Արտավազիկ, Կոշ), եռախորան (Թալինի Ս. Աստվածածին, Քրիստափոր, Լուսագյուղի Թուխ Մանուկ, Արզնիի Ս. Մարիամ, Դոբրանտավանք, Հնեվանք, Պեմզաշեն) և քառախորան (Ծովիզ, Արզնիի Ս. Կիրակի, Հոգեվանք, Մանկանոց, Փարպի, Ագարակ) տարբերակներով: Դրանցից առավել հանրահայտ և կատարյալ օրինակներն են՝ Աշտարակի Կարմրավոր, Արթիկի Լմբատավանք և Թալինի Ս. Աստվածածին եկեղեցիները (VII դ.): Բարեբախտաբար Կարմրավորում անաղարտ ձևով պահպանվել է վաղ միջնադարին բնորոշ, սակայն եզակի օրինակներով մեզ հասած կիսագնդաձև կտուրն՝ իր նախնական կղմինդրե ծածկով (Սովետական Հայաստանի տարածքում մյուս օրինակը Արագածի վեցխորանանոց նորահայտ եկեղեցին է): Առանձնահատուկ է Դոբրանտավանքի եկեղեցին, որտեղ գմբեթի հիմքը սովորական քառակուսու փոխարեն ուղղանկյուն է՝ կողմերի 3:4 հարաբերությամբ, իսկ գմբեթարդը կլորի փոխարեն՝ ձվածիր:

Խաչաձև կենտրոնագմբեթ եկեղեցիների զարգացումն ընթացել է ներքին տարածության ընդլայնման և ամբողջացման, ազատ կանգնած հենարաններից հրաժարվելու ճանապարհով: Դա ակնհայտ է Մաստարայի և նույն տիպին պատկանող՝ Արթիկի, Հառիճավանքի, Ոսկեպարի VII դ. եկեղեցիների օրինակով, որոնցում գմբեթը հենվում է խորանների և դրանք իրար հետ կապող լայնաթռիչք տրոմպների վրա, պսակելով ողջ ներքին տարածությունը: Ուշագրավ է, որ Ախթամարի Արծրունիների պալատի (X դ. առաջին կես) կենտրոնական գահադահլիճը, ինչպես ենթադրվում է, ունեցել է Մաստարայի տիպի հուշարձաններին բնորոշ ծածկ՝

պսակված երդիկավոր հսկայածավալ գմբեթով (Ստ. Մնացականյան):

Հուսալիությամբ և երկրաշարժերին դիմագրավելու առավել մեծ ներունակությամբ է օժտված քառախորան հուշարձանների այն տիպը, որում խորանների միջև ընկած անկյունային հանգույցներում գտնվում են սենյակներ, և ներքին քառաթև հորինվածքը արտաքուստ պարփակված է ուղղանկյուն եզրագծով պատերի մեջ: Այդ տիպի առաջնեկը Երևանի հյուսիսարևելյան մասում գտնվող Ավանի տաճարն է՝ կառուցված 591—602 թթ. Հովհան Բագարանցի հակաթոռ կաթողիկոսի կողմից: Այն փաստորեն Երևանի տարածքում գտնվող միջնադարյան ամենաարժեքավոր հուշարձանն է: Նրանից հետո կառուցված նույնատիպ մյուս հուշարձաններում (Հռիփսիմե, Այգեշատի Թարգմանչաց, Գառնահովիտ, Սիսավան, Արամուս, Քոլատակ) անկյունային սենյակները Ավանի կլորի փոխարեն ստանում են քառակուսի կամ ուղղանկյուն հորինվածք, մեծ մասի ճակատներում հանդես են գալիս եռանկյունաձև կամ սեղանաձև կտրվածքով խորշեր: Վերջիններս հնարավորություն են տվել խուսափելու խորանների անկյունային հոծ զանգվածներից, ստեղծելով լույս ու ստվերի հարուստ ու արտահայտիչ խաղ: Նշված տիպի առավել ավարտուն և ամբողջական օրինակը Հռիփսիմեի տաճարն է (618 թ.)՝ հայ ճարտարապետության անզուգական գոհարներից մեկը, որում հորինվածքային ձևերը հասցված են դասական կատարելության, կերպարը կրում է հանդիսավոր, վեհացնող ու ոգեշնչող շեշտ: Տաճարի անվանումը կապվում է Հռիփսիմե նահատակ կույսի անվան հետ: Հռիփսիմյանների մասին լեգենդը (բերված Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ) պատմում է, որ Հռիփսիմեն և իր ընկերուհիները փախչելով Հռոմի Դիոկղետիանոս կայսեր հետապնդումներից, գալիս են Հայաստան և ապաստան գտնում մայրաքաղաք Վաղարշապատի այգիներում: Հայոց Տրդատ թագավորը իմանալով Հռիփսիմեի գեղեցկության մասին, որոշում է կնության առնել նրան: Սակայն խստակրոն կույսը մերժում է հեթանոս արքային և փախչում պալատից դեպի քաղաքի արևելյան կողմը ու պատսպարվում Արտաշատ տանող ճանապարհի մոտի մի քարքարոտ սարավանդում: Բայց շուտով վրա են հասնում թագավորի մարդիկ և դաժանորեն խոշտանգելով՝ այրում են նրան կանթեղների հրով: Տանջամահ են արվում նաև երանելի Գայանեն՝ Հռիփսիմեի խորհրդատուն, և ընկերուհիները՝ Շողակաթն ու մյուսները: Քրիստոնեության տարածման ջատագով Գրիգոր Լուսավորիչը նրանց գերեզմանների վրա կառուցում է վկայարաններ, որոնց տեղում էլ հետագայում բարձրանում են Հռիփսիմեի, Գայանեի, Շողակաթի եկեղեցիները՝ ժառանգելով նահատակ կույսերի անունները:

Երևան-Էջմիածին ավտոմայրուղով անցնելիս, անշուշտ, նկատած կլինեք Զվարթնոցի ուղեցույցը՝ բարձր պատվանդանի վրա խրոխտ կեցվածքով թառած արծիվը, որ ստեղծվել է Ե. Քոչարի և Ռ. Իսրայելյանի համագործակցությամբ: Հենց այդտեղ՝ Էջմիածին քաղաքից 3 կմ հեռավորությամբ, ավտոմայրուղուց ոչ հեռու գտնվում են Զվարթնոց տաճարի ավերակները, որոնք այդ վիճակում էլ տպավորիչ են և վեհություն ու պատկառանք են ներշնչում դիտողին: Պատմական տեղեկությունների համաձայն տաճարը, ինչպես նաև նրանից ոչ հեռու գտնվող կաթողիկոսական պալատը կառուցել է Ներսես Տայեցի կաթողիկոսը (641—661 թթ.), որը շինարարական իր բեղուն գործունեության համար ստացել է «Շինարար» մականունը:

Ասում են, թե տաճարի բացման ծեսին ներկա է եղել բյուզանդական Կոստանդին կայսրը: Տեսնելով չքնաղ կառույցը, գոռոզ կայսրը շլանում է նրա վեհությամբ ու կատարելությամբ և որոշում նույնանման տաճար կառուցել իր մայրաքաղաքում: Սակայն վարպետը հրաժարվում է հայ ժողովրդի փառքի տաճարի նմանակը Բյուզանդիոնում կառուցելուց և ճանապարհին իրեն նետում է ծովը.

«Ու նրանից փառքի տաճարը մնաց,
Որպես ավանդ սերունդներին, դարերին...»:
(Գ. Սարյան)

Լեգենդը զուրկ չէ պատմական հիմքից: Այդ մասին հիշատակում է VII դարի հայ պատմիչ Մովսես Կաղանկատվացին:

VII դարը, որ ծնունդ է տվել շատ ու շատ արժեքավոր հուշարձանների, իրավմամբ համարվում է հայ ճարտարապետության ոսկեդարը (Թ. Թորամանյան): Եթե այդ դարում կառուցված լիներ թեկուզ միայն Զվարթնոցի տաճարը, ապա, միևնույն է, այդ դեպքում ևս ոսկեդար անվանումը միանգամայն հարմար կգար նրան:

Զվարթնոցի տաճարը երկար կյանք չի ունեցել. X դարի վերջերին այն արդեն կործանված էր: Եվ հավետ կմատնվեր մոռացության, եթե մեր դարի սկզբին Թ. Թորամանյանի և իր աշակիցների ջանքերով տաճարի ավերակները չբացվեին հողի թանձր շերտի տակից ու չխոսեին նրա փառահեղ տեսքի մասին: Թ. Թորամանյանի վերակազմության համաձայն տաճարը ներկայանում է որպես ուղղաձիգ առանցքի շուրջ հետզհետե նվազող ծավալներից կազմված կենտրոնագմբեթ եռաստիճան շինություն՝ մոտ 45 մ բարձրությամբ: Գմբեթահարկի ծանրությունն իրենց վրա են կրել խաչաթևերը կազմող խորանների միացման հանգույցներում գտնվող չորս զանգվածեղ մույթերը, որոնցից յուրաքանչյուրի հետևում կան մեկական հզոր սյուներ՝ պսակված թևատարած արծիվներ պատկերող հսկայական խոյակներով: Տաճարի ճակատային հարթությունները, պատուհանները, շքամուտքերը, քիվերը հարդարված են եղել կամարաղեղներով և զարդագոտիներով, որոնց հիմնական մոտիվը կազմել են խաղողի որթատունկը, նռնազարդ ճյուղերը, ծաղկաբույլերն ու զարդանախշերը: Կամարաղեղների միջև գտնվել են տաճարը կառուցողների բարձրաքանդակները՝ աշխատանքային գործիքներով: Դրանցից մեկի վրա պահպանվել է վարպետի անունը՝ Յոհան (Հովհան), որը, ինչպես ենթադրվում է, եղել է գլխավոր վարպետը՝ ճարտարապետը:

Չնայած տաճարի վերակազմության հիմնավորվածությանը, այն առաջ բերեց տարակուսանք և թերահավատություն, որոնք փարատվեցին միայն այն բանից հետո, երբ Ն. Մառի ջանքերով 1906 թ. Անիում Զվարթնոցի նմանօրինակը հանդիսացող Ս. Գրիգոր (Գագկաշեն) տաճարի պեղումների ժամանակ գտնվեց Գագիկ թագավորի արձանը՝ ձեռքին տաճարի մանրակերտը, որում տաճարը պատկերված է նույն հորինվածքով, ինչ որ Զվարթնոցի վերակազմության նախագծում:

Սակայն գիտենք, որ Գագկաշենը կառուցվել է XI դարի սկզբին, երբ Զվարթնոցն արդեն կործանված էր: Այդ դեպքում ինչի՞ հիման վրա է կատարվել Գագկաշենի նմանակումը: Հավանական պետք է համարել, որ այն կառուցելիս Տրդատ ճարտարապետը աչքի առաջ է ունեցել Զվարթնոցի մանրակերտը:

Տաճարի ընդհանուր տեսքի մասին ավելի ամբողջական պատկերացում կարելի է կազմել այցելելով Հայաստանի պատմության պետական թանգարան, որտեղ կարող եք տեսնել նրա մանրակերտը՝ 20 անգամ փոքրացված չափով:

Զվարթնոցը աննախադեպ պաշտամունքային շինություն էր: Այն բնութագրվում է հատակագծային և տարածական կառուցվածքի յուրահատկությամբ, կառուցքային մտահղացման համարձակությամբ, հարդարանքի գեղատեսիլությամբ, իր տեղին և Արարատի համայնապատկերին չափազանց հարմար գտնված մասշտաբով ու նկարագրով: «Ճշմարիտ է, որ այն չունի Պանթեոնի և Ս. Սոֆիայի գմբեթների վիթխարի տրամագիծը և ոչ էլ նրանց մեջ հոսած **ոսկու** հեղեղները կան այստեղ, բայց կա ճարտարապետական այնպիսի հմտություն, որ համաշխարհային ճարտարապետության մեջ հազվագյուտ օրինակ և պսակ է հայի ստեղծագործական տաղանդին» (Թ. Թորամանյան):

Անդրկովկասում հայտնի են զվարթնոցատիպ Բանակի, Լյաքիդի, Իշխանի և արդեն հիշված Գագկաշեն տաճարները: Մեծ թիվ են կազմում այն հուշարձանները, որոնք կրել են Զվարթնոցի ճարտարապետության բարերար ազդեցությունը:

Կենտրոնագմբեթ կառույցների բնորոշ տարբերակ են բազմախորան եկեղեցիները, որոնց հանրահայտ օրինակներն են Եղվարդի Զորավար (661—685 թթ.) և Թալինի շրջանի Իրինդ գյուղի (VII դ.) ութխորանանոց եկեղեցիները: Դրանց ստորին աստիճանը արտաքուստ 18 անհավասար նիստերով պրիզմա է՝ եռանկյունաձև կտրվածքի լայն խորշերով, իսկ վերինը 12 նիստանի թմբուկն է, որ պսակված է եղել բրգաձև վեղարով: Բազմախորան եկեղեցիների ուշագրավ օրինակ է Արագածի վեցխորանանոց եկեղեցին (VI դ.):

Հայկական վաղմիջնադարյան ճարտարապետության մեջ կարևոր տեղ են գրավում մեմորիալ հուշարձանները՝ դամբարանները (Աղց, Գայանեի և Հռիփսիմեի վկայարաններ, Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը Օշականում), թևավոր խաչերը (Դվին, Ավան, Զրվեժ, Կողբ), սյունանման կոթողները (Արդվի, Դսեղ, Կողբ, Բրդաձոր, Արուճ, Թալին), կոթող-մահարձանները (Օձուն, Աղուդի), խաչքարերը:

Վաղմիջնադարյան հուշարձանների տեսականին, բնականաբար, միայն պաշտամունքային կամ մեմորիալ հուշարձաններով չի սահմանափակվում: Անշուշտ, կառուցվել են նաև քաղաքացիական շինություններ, որոնք, ցավոք, անհամեմատ վատ են պահպանվել: Դրա պատճառը ոչ միայն մեծամասամբ փայտածածկ և պակաս մոնումենտալ լինելն է, այլև այն, որ առաջին հերթին նրանք էին թիրախ դառնում թշնամական հարձակումների ժամանակ, պաշտամունքային կառույցների համեմատ սակավ էին վերականգնվում: Աչքի ընկնող քաղաքացիական շինություններից են եղել՝ Դվինի արքունական գահադահլիճը, Դվինի, Ավանի, Զվարթնոցի, Արամուսի կաթողիկոսական պալատները, Արուճի Գրիգոր Մամիկոնյանի պալատը, որոնց մեծ մասի մնացորդները բացվել են պեղումներով: Դրանցում հորինվածքային կենտրոնը հանդիսացել է սյունազարդ դահլիճը, որի շուրջը դասավորվել են բնակելի, տնտեսական և օժանդակ համեմատաբար փոքր սենյակները: Սյունազարդ դահլիճների ընդհանուր հորինվածքում և առանձին մանրամասերում դիտելի է ժողովրդական ճարտարապետության հետ ակնհայտ աղերս (հազարաշեն ծածկեր, խոյակներ և այլն):

VIII դ. հենց սկզբից Հայաստանի վրա ծանրացավ արաբական տիրապետության մոտ 200-ամյա լուծը, որն արգելակեց և կասեցրեց ճարտարապետական-շինարարական գործունեության զարգացումը: Հայ ժողովուրդը՝ իր հավաքական կերպարը մարմնավորող Սասունցի Դավթի նման (որ ծառս եղած ձիու վրա՝ թշնամուն հաղթելու վճռականությամբ լի, այնպես վարպետորեն պատկերել է Ե. Քոչարը Երևանի կայարանամերձ հրապարակում) հաճախ է ընդվզել արաբական տիրապետության դեմ, ապստամբության հուժկու ալիքներով սասանել նրա հիմքերը: Արաբական լծից երկիրն ազատագրվեց 885 թվականին, երբ Աշոտ Ա Բագրատունի իշխանաց իշխանը դարձավ Հայոց թագավոր՝ հիմք դնելով Բագրատունիների թագավորությանը: Սկսվեց հայ ժողովրդի պատմության զարգացած միջնադարի փուլը (IX—XIV դդ.), որը մշակույթի՝ հատկապես ճարտարապետության բնագավառում հատկանշական եղավ որոշակի նկարագրով և տեղական առանձնահատկություններով դրսևորվող ճարտարապետական դպրոցների (Արարատյան-Շիրակի, Սյունիքի, Վասպուրականի, Գուգարքի, Արցախի) կազմավորմամբ: Պայմանավորված Հայաստանի տարածքով կատարվող միջազգային առևտրի և արհեստագործության աշխուժացմամբ արտակարգ ծաղկում ապրեց քաղաքաշինությունը: Զարգացան գոյություն ունեցող քաղաքները և գյուղաքաղաքները (Դվին, Վաղարշապատ, Գառնի), ստեղծվեցին նորերը (Լոռե, Բջնի, Կապան): Տնտեսական և քաղաքական տրոհվածության, օտարերկրյա պետությունների չդադարող թշնամական ոտնձգությունների պայմաններում հասկանալի է ողջ երկրով մեկ ամրոցների, պաշտպանական կառույցների ծավալումը, ինչպիսիք էին Ամբերդը, Բջնին, Կայանը, Գագը, Սմբատաբերդը, Որոտնաբերդը: Դրանցից առավել հզորն ու անառիկը Ամբերդն էր՝ Պահլավունիների տոհմական ամրոցը, որի մնացորդները գտնվում են Բյուրական գյուղից 7 կմ դեպի հյուսիս-արևմուտք, խոր ձորերով եզերված եռանկյունաձև բարձունքի գագաթին: Պահպանված են բարձրաբերձ պարիսպների մի հատվածը, իշխանական եռահարկ դղյակի, ջրամբարի, ջրամատակարարման համակարգի, բաղնիքի մնացորդները և Վահրամ Պահլավունի իշխանի 1026 թվականին կառուցած գմբեթավոր եկեղեցին, որը Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցու

(1031 թ.) հետ հովհարաձև վեղարով եկեղեցիների վաղագույն օրինակներից է:

Քաղաքաշինական բարձր կուլտուրայի և սկզբունքների նյութականացման լավագույն արտահայտություններ են առանձին թագավորությունների մայրաքաղաքները՝ Լոռեն (Տաշիր-Ձորագետ), Կապանը (Սյունիք), Ախթամարը (Վասպուրական) և, հատկապես, Բագրատունիների մայրաքաղաք Անին: «Հազար ու մի եկեղեցիների» այդ քաղաքում արգասաբեր գործունեություն էր ծավալել ժամանակի ամենատաղանդավոր ճարտարապետներից մեկը՝ մեծահամբավ Տրդատը, որի ստեղծագործությունները՝ Անիի Մայր տաճարը, Գագկաշենը, Արգինայի կաթողիկոսարանը և եկեղեցին, հայ ճարտարապետության առաջնակարգ ստեղծագործություններից են (Տրդատի մեծագործությունների թվին է դասվում նաև 989 թ. Կոստանդնուպոլսի Ս. Սոֆիայի տաճարի երկրաշարժից տուժած գմբեթի վերականգնումը, որի մասին տեղեկացնում է X դ. հայ պատմագրության նշանավոր դեմքերից մեկը՝ Ստեփանոս Տարոնացի Ասողիկը): Ի դեպ, ավստրիացի գիտնական Հ. Ստրժիգովսկու կարծիքով, Անիի Մայր տաճարի ներսույթի լուծման մեջ կիրառվել են հորինվածքային այնպիսի ձևեր ու հնարքներ, որոնք ավելի ուշ հանդիպում են գոթական ճարտարապետության մեջ:

Զարգացած միջնադարի ճարտարապետության ամենաշքեղ ու խորունկ դրսևորումները վանքային համալիրներն են՝ բազմատեսակ, իմաստալից հորինվածքներով, մեկը մյուսից ուշագրավ, հետաքրքիր և ինքնատիպ կառույցներով: Դրանք բոլորն էլ կրում են խոր անհատականության կնիք, աչքի ընկնում հորինվածքային բարձր հատկանիշներով: Վանքային համալիրները ոչ միայն հոգևոր-պաշտամունքային կենտրոններ էին, այլև կարևոր դեր էին կատարում կրթության, մշակութային-լուսավորական բնագավառներում: Դրանցից շատերը գրչության նշանավոր օջախներ էին, որտեղ գրվել, նկարազարդվել և ընդօրինակվել են հայերեն արժեքավոր շատ ձեռագրեր, որոնք այսօր զարդարում են Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանը, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյանների, Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի, Նոր Ջուղայի պատրիարքարանի, Լոնդոնի Բրիտանական թանգարանի և այլ ձեռագրական հավաքածուները:

Հայ մատենագրության և գրչության արվեստի հանրաճանաչ կենտրոն է եղել Հաղպատի վանքը, որտեղ արգասաբեր գործունեություն են ծավալել գիտնական, մատենագիր Դավիթ Քոբայրեցին, բանաստեղծ, քերական Հովհաննես Երզնկացի Ծործորեցին (Պլուզ), իրավագետ Դավիթ Ալավկա որդին և ուրիշներ: Նրա խուցերից մեկում է ընդօրինակվել Հաղպատի հռչակավոր ավետարանը (1211 թ.): Այդտեղ կրոնավորել է մեծաքանքար Սայաթ-Նովան.

Հաղպատի լուսարար Սայաթ-Նովեն իմ,
Մե կանթեղս վառելու ձեթ չունիմ...

Վանքային համալիրների կրթամշակութային ակտիվ գործունեությամբ է պայմանավորված դրանցից շատերում (Սանահին, Հաղպատ, Գոշավանք, Սաղմոսավանք, Տաթև, Գլաձոր) գրատուն- մատենադարանների, հոգևոր դպրոցների, համալսարանների գոյությունը: Բարձր համարում են ունեցել Սանահինի, Տաթևի և, հատկապես, Գլաձորի համալսարանները: Վերջինս (հիմնադրված 1282 թ.) իր կրթամշակութային և գիտական գործունեությամբ, հասարակական կյանքում խաղացած մեծ դերով ժամանակակիցների կողմից վաստակել է «երկրորդ Աթենք պանծալի», «մեծ դպրատուն», «գերհռչակ համալսարան» անվանումները: Գլաձորի հետ են կապված հայ մշակույթի շատ նշանավոր գործիչների՝ Ներսես Մշեցու, Եսայ Նչեցու, Ստեփանոս Օրբելյանի, Հովհաննես Որոտնեցու, Մոմիկի, Թորոս Տարոնացու, Մխիթար Սասնեցու, Հովհաննես Արճիսեցու, Խաչատուր Կեչառեցու անունները: Այդտեղ գրվել և նկարազարդվել են տասնյակ ձեռագիր մատյաններ:

Որպես ճարտարապետական ավանդույթների ժառանգորդության և հաջորդակցության արտահայտություն զարգացած միջնադարի ճարտարապետության մեջ՝ հատկապես նրա վաղ փուլերում, լայնորեն կիրառվում են վաղմիջնադարյան հուշարձանների հատակագծային և ծավալատարածական շատ ձևեր (Վ. Հարությունյան): Դրանցում գերակշռում են վաղ միջնադարում լայնորեն հայտնի միանավ դահլիճների (Դսեղի Բարձրաքաշ, Ջուխտակ վանք, Քոբայր, Նորավանք, Հոռոմայր), գմբեթավոր դահլիճների (Մարմաշեն, Բջնի, Կեչառիս, Նորադուս, Հաղպատ), եռախորան և քառախորան (Կոթավանք, Մաքենյաց, Որոտնավանք, Մասրաց Անապատ, Գնդեվանք, Վանեվան, Ցախաց Քար), կենտրոնագմբեթ (Սանահին, Մարմաշեն) եկեղեցիների տարբերակները, որոնք սակայն հեռու են ուղղակի կրկնություններից:

Նոր դարաշրջանը առաջադրում է իր գեղագիտական-հորինվածքային սկզբունքները: Ավելի են կարևորվում հուշարձանների ճակատային հարթությունների պլաստիկական մշակումները, քարի գեղազարդող հատկանիշները, բազմագունությունը, որմնանկարչական արվեստի հնարավորությունները, համաչափական և համամասնական կապը, փոխպայմանավորվածությունը, դիտողական ընկալման լավագույն պայմանները, շրջապատող միջավայրի հետ միասնությունը: Սեղմվում են եկեղեցիների հորիզոնական չափերը, դրա փոխարեն շեշտվում են ուղղաձիգ համաչափությունները: Կարևոր նշանակություն է տրվում կառույցների հակաերկրաշարժային միջոցառումներին, ձայնական և հնչողական հատկանիշներին:

Վանքային համալիրներում իր դիրքով և զանգվածով իշխողը գլխավոր եկեղեցին է, որին ստորադաս են մյուս շինությունները՝ այդ թվում սովորաբար վերասլաց համաչափություններով աչքի ընկնող զանգակատները: Ասվածը միանգամայն ակնհայտ է Տաթևի, Սանահինի, Հաղպատի, Գոշավանքի և այլ վանքային համալիրների օրինակով: Տաթևի վանքի Պողոս-Պետրոս եկեղեցին (895—906 թթ.) Սյունիքի ճարտարապետական դպրոցի ամենաաչքի ընկնող ստեղծագործությունն է, որը վերարտադրում է վաղմիջնադարյան գմբեթավոր բազիլիկների (Օձուն, Գայանե) եզակի տարբերակը՝ հանդիսանալով գմբեթավոր բազիլիկից խաչագմբեթային տիպին (որն ավելի ուշ լայն տարածում ստացավ) անցման շղթայի միջանկյալ օղակներից մեկը (Հ. Խալփախչյան):

Սանահինի և Հաղպատի վանքերը կազմավորվել են մի քանի հարյուրամյակների ընթացքում, շինարարական մի քանի փուլերով, բնականաբար, ոչ միասնական մտահղացմամբ և շինարար վարպետների տարբեր սերունդների ջանքերով: Սակայն դա չի խանգարել, որ երկու համալիրներն էլ լինեն ամբողջական, աչքի ընկնեն միասնական և փոխշաղկապված հորինվածքով, ոճական և գեղարվեստական ընդհանրությամբ, տարածական հավասարակշռվածությամբ: Համալիրների կազմավորման այդ հատկանիշը, որ հատուկ է հայ ճարտարապետությանն ընդհանրապես, արդյունք է յուրաքանչյուր նոր կառույցի իրականացման ժամանակ արդեն գոյություն ունեցողների հետ հաշվի նստելու, ճարտարապետական-գեղարվեստական ձևերի ու հնարքների ժառանգորդության և հաջորդական փոխանցման, բարձր վարպետության և նվիրումի: Սանահինի և Հաղպատի վանքերի գլխավոր եկեղեցիները՝ Ամենափրկիչը (966 թ.) և Ս. Նշանը (976—991 թթ.) արևելք-արևմուտք փոքր-ինչ ձգված, ներքուստ խաչաձև, արտաքուստ ուղղանկյուն գմբեթավոր կառույցներ են, որոնք նշված տիպի վաղագույն կիրառություններից են: Տարբեր են Ամենափրկիչի և Ս. Նշանի գեղարվեստական արտահայտչականության կրողները: Առաջինում դրանք «եկեղեցու շուրջը պար բռնող որմնակամարներն են» (Կ. Ղաֆադարյան), երկրորդում՝ ճակատների պարզ ու հստակ հարթություններին շեշտված երանգ հաղորդող եռանկյունաձև կտրվածքով խորշերը: Այդ երկու նշանավոր եկեղեցին էլ կառուցվել են Աշոտ Ողորմած թագավորի կին Խոսրովանույշ թագուհու ջանքերով, որդիների՝ Սմբատի և Կյուրիկեի արևշատության համար: Հայ միջնադարյան ճարտարապետության պատմությանը հայտնի են իշխանազուն կանանց նաև շատ այլ անուններ, որոնք նշանավորվել են իրենց շինարարական գործունեությամբ՝ հանդիսանալով աչքի ընկնող կառույցների մեկենասներ՝ նախաձեռնողներ, հովանավորողներ, միջոցներ տրամադրողներ: Ահավասիկ՝ նրանցից մի քանիսը. Կատրամիդե (Անիի Մայր տաճար), Վանենի (Սանահինի կամուրջ), Հրանուշ (Սանահինի վանքի Ս. Գրիգոր եկեղեցի և գրատուն-մատենադարան), Մարիամ

(Սևանի Ս. Առաքելոց և Ս. Աստվածածին, Շողագավանքի Ս. Պետրոս եկեղեցիներ), Սոփի (Գնդեվանքի եկեղեցի), Շահանդուխտ (Որոտնավանքի եկեղեցի), Խաթուն (Հաղպատի վանքի Ս. Աստվածածին եկեղեցի), Մարիամ (Քոբայրի վանքի եկեղեցի): Առանձնակի է Սոփի իշխանուհու հանրահայտ արձանագրությունը. «Մատանի էր անակն Վայոց ձոր, շինեցի զսա (Գնդեվանքի եկեղեցին-Գ. Շ.) և եդի ակն ի վերա»:

Վանքային համալիրներում եկեղեցիներից հետո մյուս կարևոր շինությունները գավիթներն են, որոնք ունեցել են թե՛ կրոնական և թե՛ աշխարհիկ նշանակություն, հանդիսանալով միաժամանակ տոհմական տապանատներ: Դրանք սովորաբար կցվում էին գլխավոր եկեղեցիների արևմտյան ճակատներին (թեպետ հայտնի են նաև շեղման դեպքեր): Վաղ շրջանի գավիթներն առավելապես կիսագլանաձև թաղով ծածկված երկարաձիգ դահլիճներ են (Վահանավանք, Գնդեվանք, Քարկոփ): Կիրառվում են նաև չորս սյուներով քառակուսի հատակագիծ ունեցող գավիթները, որոնց անդրանիկ օրինակը Հոռոմոսի վանքինն է: Այդ հորինվածքը, որ ծագումնաբանորեն հանգում է հայկական ժողովրդական բնակելի տանը՝ գլխատանը, հետագայում դարձավ հայկական գավիթների համար ամենատարածվածը: Դրա ուշագրավ օրինակներից են Թեղենյաց վանքի, Սանահինի, Գոշավանքի, Հաղարծնի գավիթները:

Եկեղեցիների, երբեմն նաև գավիթների հարավային պատերին հաճախ կարելի է տեսնել կիսաշրջանագծով դասավորված գրերի և ճառագայթաձև փորվածքների զուգակցությամբ գողտրիկ պատկերներ, որոնք օրգանապես մերվում են ճակատային հարթություններին և առաջին հայացքից չեն տարբերվում գեղարվեստական հարդարանքի տարրերից: Որոշակի գեղարվեստական հատկանիշներով օժտված այդ պատկերները ունեցել են զուտ գործառական նշանակություն՝ հանդիսացել են արեգակնային ժամացույցներ: Դրանց ողջ «մեխանիզմը» բաղկացած է ընդամենը գրերի տախտակից և կենտրոնական մասի ձողիկից, որից ընկած ստվերի ուղղությամբ էլ որոշվում է ժամանակը: Արեգակնային ժամացույցների հայտնի վաղագույն օրինակները վերաբերում են VII դարին: Դրանց մեջ իր գեղարվեստական կատարելությամբ աչքի է ընկնում Զվարթնոցի արեգակնային ժամացույցը (ցուցադրվում է տաճարի մնացորդներին հարևան «Զվարթնոց» թանգարանում):

Հուշարձանախմբերում քաղաքացիական շենքերը (դպրոցներ, սեղանատներ, գրատուն-մատենադարաններ և այլն) իրենց արտահայտչականությամբ, հորինվածքային մտահղացումներով եկեղեցականներին համահնչուն են, որոշ դեպքերում նաև իրենց կնիքն են դրել վերջիններիս ճարտարապետության վրա: Սանահինի հոգևոր դպրոցը (XI դ. առաջին կես), որ ավանդաբար կոչվում է Մագիստրոսի ճեմարան (միջնադարի հայ նշանավոր գիտնական, փիլիսոփա և մանկավարժ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու անունով, որն աչքի է ընկել նաև շինարարական գործունեությամբ, կառուցելով Կեչառիսի Ս. Գրիգոր և Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցիները), զբաղեցրել է Ամենափրկիչ և Ս. Աստվածածին եկեղեցիների միջև ձգվող ուղղանկյուն սրահը: Ի տարբերություն Հայաստանի միջնադարյան նմանատիպ սրահների, որտեղ հորինվածքի կառուցքային հիմնական տարրերն են պատերը և թաղերը, Սանահինում որոշիչը կմախքն է՝ կազմված հզոր որմնամույթերից և կամարներից, որոնց ներդաշնակ և ռիթմիկ դասավորությամբ պայմանավորված է գեղարվեստական արտահայտչականության ուժը:

Հայկական գրատների մեջ հնագույնը և ամենամեծը Սանահինի գրատուն-մատենադարանն է (1063 թ.): Այն քառակուսի հատակագծով շինություն է, որի չորս կողմերի կենտրոններում գլտնըվող կիսասյուներից բարձրացող հուժկու կամարներին հենվում է երդիկավոր վրանաձև ութանիստ գմբեթը: Ծածկի համարձակ և կառուցքագեղ լուծումը հայկական մոնումենտալ ճարտարապետության մեջ չունի իր նմանօրինակը:

Գրատների հորինվածքում հաշվի են առնված մատյանների և ձեռագրերի անխաթար պահպանման, լուսավորության, օդափոխության, ջերմաստիճանի կայունության խնդիրները: Դրանց շինարարական բարձր կուլտուրան, պատճառաբանված և արտահայտիչ հորինվածքը վկայում են XI դ. կեսերին ոչ միայն ճարտարապետության զարգացման բարձր մակարդակի, այլև միջնադարյան Հայաստանում գրի ու գրչության նկատմամբ ցուցաբերվող սիրո և հոգատարության մասին:

Սովետական Հայաստանի տարածքում պահպանված միջնադարյան կամուրջների պսակը, ինչպես նաև միջնադարյան Հայաստանի նշանավոր ինժեներական կառույցներից մեկը Սանահինի կամուրջն է (1192 թ.)՝ կառուցված Դեբեդ գետի նեղ և նպաստավոր ափեր ունեցող հատվածում: Այն ամենամեծ թռիչքովն է և ամենահինը պահպանվածների մեջ: Միաթռիչք է՝ 18,0 մ բացվածք ունեցող կիսաշրջանագծային կամարով: Բացառիկ վարպետությամբ է լուծված երթևեկելի մասի մակարդակների տարբերությունը հաղթահարելու խնդիրը: Կամրջի հորինվածքում ինժեներական համարձակ մտահղացումը սերտորեն զուգակցված է ճարտարապետական-գեղարվեստական նուրբ զգացողության հետ:

XII դ. վերջում վրաց զորքերի համագործակցությամբ Հայաստանն ազատագրվեց սելջուկների մոտ 150-ամյա տիրապետությունից: Երկրի կենտրոնական և հյուսիսարևելյան շրջաններում հաստատվեց Զաքարյանների իշխանությունը: Տիրող խաղաղությունը և տնտեսական կյանքի աշխուժացումը նպաստեցին շինարարական-ճարտարապետական նոր վերելքին: Քաղաքների հետ միասին զարգացման օջախներ դարձան վանքային համալիրները, որոնց ոլորտում գերակշիռ նշանակություն ստացան աշխարհիկ մտածողությունն ու աշխարհիկ շինությունները: Նոր թափ և տարածում գտան գավիթ-ժամատների, դպրոցների, սեղանատների, գրատների, աղբյուրների, կոմունալ և տնտեսական կառույցների շինարարությունը: Դրա շնորհիվ XIII—XIV դարերում բարգավաճեցին և ավարտուն տեսք ստացան նախորդ դարերում արդեն կազմավորված և ճանաչում ստացած վանքային համալիրները՝ Սանահինը, Հաղպատը, Տաթևը, Կեչառիսը, Մարմաշենը, Հաղարծինը, Մակարավանքը: Առաջ եկան պաշտամունքային շենքերի նոր տիպեր և տարատեսակներ, ինչպես եկեղեցի-դամբարանները (Նորավանք, Եղվարդի Ս. Աստվածածին, Կապուտան), աղոթասրահ չունեցող Եղեգիսի Զորաց եկեղեցին, Աքորու մեկ զույգ հենարաններով եռանավ դահլիճը կամ մեկ զույգ մույթերով գմբեթավոր բազիլիկները (Կիրանց, Ախթալայի Ս. Աստվածածին, Դսեղի Ս. Գրիգոր):

Դեռևս 2000 տարի առաջ Հին աշխարհի ճարտարապետության նշանավոր տեսաբան Մարկ Պոլիոն Վիտրուվիոսը (որ գրել է «Տասը գիրք ճարտարապետության մասին» տրակտատը) սահմանել է ճարտարապետական ստեղծագործությանը ներհատուկ երեք հատկանիշները՝ օգուտը, ամրությունը և գեղեցկությունը (դրանք նույնն են, ինչ որ ժամանակակից տերմիններով ասած՝ գործառական, կառուցքային և գեղարվեստական հասկացությունները): Անցնում են դարերը, փոխվում ժամանակները, բայց այդ հատկանիշներն ուղեկցում են ճարտարապետական բոլոր ստեղծագործություններին՝ այս կամ այն հատկանիշի առավել կամ պակաս դրսևորմամբ՝ կախված ստեղծագործության բնույթից, ժամանակի գեղարվեստական ըմբռնումներից:

Հայ ճարտարապետության զարգացած միջնադարի փուլում՝ հատկապես XIII—XIV դարերում, գեղարվեստական արտահայտչականության խնդիրները մղվում են առաջին պլան, գեղարվեստականը բարձրանում է գեղատեսիլության աստիճանի՝ դառնալով ճարտարապետական երկի ամենաբնութագրական կողմերից մեկը: Ճարտարապետական համալիրներում լայն տեղ են տրվում ներքին ու արտաքին հարդարանքին, գեղարվեստական արտահայտչամիջոցներին: Կառույցների անբաժանելի մասն են դառնում Աստվածամոր, Քրիստոսի, առաքյալների, հրեշտակների, պահպանիչ խորհրդանշանների, կենաց ծառի և, հատկապես, շինարարությանը նպաստ բերած անձանց՝ մեկենասների ամենատարբեր հորինվածքներով հանդես եկող պատկերաքանդակները՝ ճարտարապետական ձևերի ու հնարքների հետ զուգակցված, օրգանապես միահյուսված: Գեղատեսիլության ոճը առավել ցայտուն դրսևորում է գտել՝ Աղջոց վանքի,

Հառիճավանքի, Մակարավանքի, Նոր Վարագավանքի և, հատկապես, Վայոց ձորի հուշարձաններում՝ Նորավանքում, Սպիտակավորում, Արենիում, Արատեսում: Աղջոց վանքի Պողոս-Պետրոս եկեղեցու մուտքի երկու կողմի առաքյալների ֆիգուրները, Նորավանքի գավթի արևմտյան ճակատի, երկհարկանի դամբարան-եկեղեցու շքամուտքերի և զանգաշտարակի բարձրաքանդակները հայ քանդակագործական արվեստի գլուխգործոցներից են՝ Ախթամարի տաճարի գեղաքանդակ պատկերագրության արձագանքն ու անդրադարձը: Ճարտարապետական կառույցներում քանդակը սովորաբար կատարում է օժանդակ դեր՝ լրացնելով, շեշտելով գեղարվեստական արտահայտչականությունը: Մինչդեռ նշված հուշարձանների օրինակը հակառակն է ասում. կարծես թե դրանք ստեղծվել են որպես ֆոն՝ քանդակներն ըստ արժանվույն ներկայացնելու համար: Եվ պատահական չէ, որ այդ հուշարձանները կերտողների անունները (Մոմիկ, Սիրանես) գրվում են միջնադարյան մեծ վարպետների՝ Տրդատի, Մանուելի, Գալձագի անունների շարքում:

Դարաշրջանի թողած ամենաէական ճարտարապետական հետքերից մեկը Գեղարդի վանքային համալիրն է (XIII դ.), որի շինարարության առավել ուշագրավ շրջանը սկսվում է XIII դ. կեսերից, երբ Պռոշյան իշխանական տունը Զաքարյաններից գնելով վանքը, ծավալում է ժայռափոր՝ իրենց արժեքով և կատարելությամբ բացառիկ հուշարձանների շինարարությունը: Հայաստանում, բացի Գեղարդից, հայտնի են նաև ժայռափոր այլ կառույցներ (Վանա ժայռի Խորխորյան այրեր, Անիի վիմափոր թաղամասեր, Վայոց ձորի Մարտիրոս գյուղի վանք, Սպիտակի անձավներ), սակայն Գեղարդն առանձնահատուկ է իր ժայռափորների՝ հայ ճարտարապետության վերգետնյա բյուրեղացած ձևերի հետ ունեցած հարազատությամբ, գեղարվեստական արտահայտչական բարձր հատկանիշներով: Դրանցում տեղ են գտել և՛ խաչաձևող զույգ կամարներով հնարքը, և՛ գմբեթահարկ ներգծված խաչը, և՛ չորս հենարանով քառակուսի գավթի հորինվածքը, և շատ այլ ձևեր ու հնարքներ՝ նոր հնչեղությամբ, նոր մեկնաբանությամբ, նոր հմայքով: Ճարտարապետության և գեղազարդող քանդակների մի աննման ու ներդաշնակ հյուսվածք է դրանց ներսույթը: Այստեղ է գործել վարպետ Գալձագը՝ իր աշակերտների հետ, համեստորեն խնդրելով միայն՝ «Զվարդպետս Գալձագ յիշեցէք» («Կերտել են լուռ ու անցել- և իրենց շունչը թողել դարերում», Ե. Չարենց):

Խորակերտի վանքի (XIII դ. առաջին կես) ընդհանուր առմամբ պարզ ու անպաճույճ ճարտարապետության ֆոնի վրա իր արտասովոր և եզակի հորինվածքով թե՛ դրսից, թե՛ ներսից շլացնում է եկեղեցին պսակող գմբեթը, որի թմբուկի ստորին կեսը կազմում են վեցանիստ միակտոր քարից 30 սյուներ՝ պատած խոյակների և խարիսխների հարդարուն գոտիներով: Մեծ վարպետությամբ, կառուցքային և գեղարվեստական հմտությամբ է լուծված գմբեթի ծածկը: Սովորական կիսագնդաձև թաղի փոխարեն այդտեղ հիմնական տարրը, որը խաղում է կոշտ միջուկի դեր և ստեղծում միաձույլ կառուցք՝ դա փոխհատվող վեց ջլակամարներն են՝ օրգանապես կապված թաղի հետ: Այդ հնարքը, որ հանդիպում է նաև նույն դարի գավիթների (Խորանաշատ, Մակարավանք, Նեղուց) ծածկերում, եկեղեցիներում կիրառման ուրիշ օրինակ չունի: Թմբուկի սյունամեջերից թափանցող առատ լույսի պայմաններում սյուները դիտողի համար աննյութանում են, և գմբեթի հսկայական լուսապսակը՝ իր ներքին ողջ հմայիչ կերտվածքով հառնում է դիտողին, ասես, երկնքից կախված:

Ավելի ակնառու է դառնում ժողովրդական ակունքների դերը հորինվածքային նոր ձևերի և հնարքների արարման գործում: Դա երևում է Առաքելոց վանքի գավթի օրինակով, որտեղ քարով հարազատորեն վերամարմնավորված է ժողովրդական հազարաշեն ծածկը: Պակաս խոսուն չեն Գոշավանքի գրատուն-զանգակատան, Սաղմոսավանքի գրատան ծածկերը: Նոր, խիզախ և տպավորիչ մտահղացումներով է դրսևորվում չորս սյուներով քառակուսի գավիթների հորինվածքը (Մակարավանք, Հառիճավանք, Գեղարդ, Սաղմոսավանք, Խորանաշատ, Հաղպատի Համազասպի ժամատուն, Աստվածընկալ):

Ենթափուլը բնութագրվում է ինքնատիպ և կառուցքագեղ ձևերի, տրամաբանական և ճշմարիտ կերպարների հարստությամբ: Դա հատկապես երևում է XIII դ. գավիթների նոր տիպերի առաջացմամբ, ինչպես խաչաձևվող զույգ կամարներով հորինվածքն է (Հաղպատ, Առաքելոց, Խորակերտ, Մշկավանք)՝ մի մասում կրկնահարկ տարբերակով: Միաժամանակ տարբեր և յուրահատուկ հորինվածք ունի Սանահինի երկրորդ գավիթը՝ նախագավիթը (1211 թ.), որը ցածրադիր զույգ կամարաշարերով բաժանված է կիսագլանաձև թաղերով ծածկված երեք նավի: Արևմտյան ճակատում պատի փոխարեն ճակտոնավոր բաց կամարաշար է, որն ընդգծում է երկլանջ կտուրների ռիթմը և հնարավորություն տալիս լույսի անկաշկանդ ներթափանցման, ներսույթը դարձնելով սիզավետ բակի օրգանական շարունակությունը: Նախագավիթն իր եռանավ հորինվածքով եզակի է հայկական գավիթների մեջ և, ինչպես ենթադրվում է, ծագումնաբանական կապ ունի հայ միջնադարյան պալատների սյունազարդ դահլիճների հետ (Կ, Ղաֆադարյան):

Գավիթներին իրենց հորինվածքով մոտ են սեղանատները, որոնց հոյակապ օրինակները պահպանվել են Հաղարծնում և Հաղպատում: Դրանք ուղղանկյուն դահլիճներ են՝ միջին մասի զույգ հենարաններով բաժանված ճիշտ երկու քառակուսիների, որոնցից յուրաքանչյուրը ծածկված է խաչաձևվող զույգ կամարների վրա հենվող թաղով՝ կենտրոնում ունենալով երդիկավոր ութանիստ ցածր գմբեթ: Առավել պարզ՝ կիսագլանաձև թաղով ծածկված ուղղանկյուն հորինվածք ունեն Թեղենյացի, Կիրանցի, Քոբայրի վանքերի սեղանատները:

Սկսած XIII դարից վանքային համալիրներում որպես առանձին կանգնած կառույցներ հանդես են գալիս մի քանի հարկաբաժիններից բաղկացած զանգակատները, ինչպես Սանահինում, Հաղպատում: Արվեստագիտական հզոր պոռթկման արգասիք է հատկապես Հաղպատինը, բաղկացած զանգաշտարակով պսակված երկու հարկաբաժնից, որտեղ անցումը ստորին խաչաձևությունից երկրորդ հարկաբաժնի կտրված անկյուններով քառակուսուն կատարվում է շթաքարե տրոմպների միջոցով: Վերջիններս՝ զուգակցված տարբեր մեծության ճակտոնների, բացվածքների եզրակալների, սյունազարդ պատուհանների և այլ տարրերի հետ, բացառիկ զուգս ու հմայք են տալիս ճակատային հարթություններին: Հաճելի համաչափություններով, ծավալատարածական հետաքրքիր ներդաշնակումներով և գունային զուգադրումներով կառույցը թողնում է կատարյալ գեղաքանդակի տպավորություն: Բացի առանձին կանգնածներից, զանգակատներ կառուցվում են նաև այլ նշանակության շինությունների (եկեղեցու, գավթի, գրատան) հետ համատեղված:

Աղբյուրաշինությունը Հայաստանում պապենական արհեստ է: Աղբյուրի կառուցումը հայի համար նույնն է, ինչ որ զավակի ծնունդը: Մինչև վերջերս հյուսիսային Հայաստանում «ամենաբազմազավակ հայրը» ժողովրդական վարպետ Մեհրաբն էր (մահացել է 1980 թ.), որն իր արգասաբեր կյանքի ընթացքում կառուցել է 50-ից ավելի աղբյուր և նվիրել ժողովրդին: Մեր օրերում շատ տարածված այդ գողտրիկ շինությունները, որոնք կրում են ժողովրդական իմաստնության և հայ ազգային ճարտարապետության ավանդույթների կնիքը, հարատևել են անընդմեջ՝ սկսած խոր միջնադարից: Այդ մասին են վկայում միջնադարի գրեթե բոլոր ժամանակներին վերաբերող աղբյուրների գոյությունը՝ մեկը մյուսից ուշագրավ հորինվածքներով: Ամենաարժեքավորները վերաբերում են XIII դարին և հանդես են գալիս խոշոր վանքային համալիրներում (Հաղպատ, Սանահին, Տաթև, Մակարավանք): Դրանք հիմնականում երկթեք կտուրով թաղակապ, սիմետրիկ հորինվածքով սրահներ են՝ գլխավոր ճակատի կողմից ջլատված տարբեր քանակության՝ մեկ (Տաթև), երկու (Սանահին), երեք (Հաղպատ) կամարային լայն բացվածքներով, որոնք, կարծես թե, հրավիրում են անցորդներին:

Ողջ Հայաստանի տարածքով մեկ սփռված են միջնադարյան հայ քանդակագործական արվեստի բուռն վերելքը նյութականացնող հուշարձաններ՝ խաչքարեր, որոնք կանգնեցվել են ոչ միայն որպես մահարձաններ, այլև ամենատարբեր շարժա-

ոիթներով (պատմական կարևոր իրադարձություններ, աչքի ընկնող կառույցների հիմնադրում, վերանորոգումներ, նվիրատվություններ, ջրաշինարարական աշխատանքներ): Դրանց մի մասը քանդակագործական արվեստի կատարյալ նմուշներ են, որոնք բնութագրվում են գեղարվեստական ձևերի հարստությամբ, պատկերագրական հնարքների բազմազանությամբ, մշակման բացառիկ վարպետությամբ, քարի հնարավորություններն առավելագույնս բացահայտելու հմտությամբ: Պատահական չէ, որ հայկական խաչքարային արվեստը համեմատվում է միայն հայ միջնադարյան արվեստի մի ուրիշ վիթխարի երևույթի՝ մանրանկարչության հետ: Խաչքարերի բացառիկ արժեքավոր նմուշների կարելի է հանդիպել Գոշավանքում, Գեղարդում, Սանահինում, Հաղպատում, Դսեղում, Նորավանքում, Էջմիածնում և այլուր: Այդ «բացառիկ արժեքավորների» մեջ ամենաարժեքավորը, իհարկե, Գոշավանքի Պողոս կազմողի «ժանյակահյուս» զույգ խաչքարերն են (որոնցից մեկը տեղափոխված է Հայաստանի պատմության պետական թանգարան): Դրանցում քարը, կարծեք թե, կորցրել է իր նյութականությունը, հլու-հպատակ հանձնվել քանդակագործի անեզր երևակայությանը, մտքի ու բազկի սլացքին:

Միջազգային քարավանային առևտրի և առևտրական ուղիների զարգացման հետ կապված անհրաժեշտություն առաջացավ քարավանատների (իջևանատներ) կառուցման, որոնք տեղադրվում էին քարավանային ճանապարհների վրա՝ մեկօրյա շարժման հեռավորությամբ (Աթարբեկյան, Դաշտադեմ, Լեռնանցք, Առաքելոց, Արուճ, Սելիմ, Հառջիս):

Հայ ճարտարապետության բուռն զարգացումը, որ տեղի ուներ զարգացած միջնադարում, XIV դ. կեսերից սկսած վերստին ընդհատվեց՝ այս անգամ էլ թաթար-մոնղոլների և միջինասիական այլ վաչկատուն ցեղերի ասպատակությունների, ճնշման ու հարստահարման հետևանքով: Է՛լ ավելի վատթարացավ Հայաստանի վիճակը, երբ XVI դ. սկզբից այն դարձավ թուրք-պարսկական երկարատև ու լարված կռիվների ասպարեզն ու կովախնձորը: Աննտանելի պայմանները ստիպեցին բնակչությանը հարկադրված բռնելու տարագնացության ճանապարհը՝ հովանի և օթևան գտնելով Ռուսաստանում, Վրաստանում, Բալկանյան երկրներում, Արևմտյան Եվրոպայում, Հնդկաստանում և այլուր:

Ասվածը փոքր-ինչ վերապահությամբ է վերաբերում Սյունիքին, որտեղ ազգային-ազատագրական համառ պայքարի շնորհիվ ձեռք էր բերվել որոշ ինքնուրույնություն: Եվ երբ ողջ Հայաստանը հեծում էր թուրք-պարսկական լծի տակ, Սյունիքի (Կապանի) իշխանությունը պահպանում էր ինչ-որ չափով անկախություն: Պատահական չէ, որ հայ ճարտարապետութան ուշմիջնադարյան փուլը (XV—XVIII դդ.)՝ հատկապես նրա վաղ շրջանը, ներկայացվում է առավելապես Սյունիքի ճարտարապետական հուշարձաններով (Մ. Հասրաթյան):

Ուշ միջնադարում շինարարական աշխատանքները հիմնականում ընթանում էին նորոգումների և վերականգնումների ուղղությամբ՝ հատկապես 1679 թ. կործանիչ երկրաշարժից հետո, երբ մեծ չափով տուժեցին Արարատյան հարթավայրի շինությունները: Լայնածավալ վերականգնման-բարենորոգչական աշխատանքներ կատարվեցին Էջմիածնի Մայր տաճարում: Առավել նշանակալիցը տաճարի ներքին պատերի արվեստագիտական բարձր շնչով, հայ մանրանկարչության համն ու բույրը խնկարկող որմնանկարներն են՝ ոսկեձեռիկ Նաղաշ Հովնաթանի և նրա արժանավոր շառավիղների՝ Հակոբ, Հարություն, Հովնաթան, Մկրտում, կրտսեր Հակոբ Հովնաթանյանների, ստեղծագործական սխրանքը. մի ամբողջ ազգատոհմ իր կյանքի գործըն է համարել մայր ժողովրդի հույսի ու հավատի կրակը վառ պահող Մայր տաճարի ներսույթը է՛լ ավելի գեղեցկատես ու տպավորիչ դարձնելը:

Ամրացվում էին և պաշտպանական նպատակների հարմարեցվում եկեղեցիները և վանքային համալիրները:

Ուշմիջնադարյան վանքային համալիրներն իրենց հորինվածքով էականորեն տարբերվում են նախորդ դարաշրջանների համալիրներից: Եթե վերջիններս ստեղծվել են տևական ժամանակամիջոցում, մի քանի շինարարական փուլերով, ապա

ուշմիջնադարյաններն իրականացվել են միասնական մտահղացմամբ, անհամեմատ կարճ ժամանակահատվածներում, որի հետևանքով դրանք հորինվածքային և գեղարվեստական արտահայտչական առումով ավելի ամբողջական են: Բնութագրող հատկանիշներից է նաև կառույցների խմբավորումը միջին մասում գտնվող գլխավոր կառույցի՝ եկեղեցու շուրջը: Համալիրները շրջափակված են հիմնականում ուղղագիծ շրջագիծ ունեցող՝ կիսակլոր աշտարակներով հզորացված պարիսպներով, որոնց երկարությամբ դասավորված են օժանդակ և տնտեսական շինությունները (Տաթևի Մեծ անապատ, Շատին, Խոր Վիրապ, Մուղնի, Կնեվանք): Դրանք հանդիսացել են ոչ միայն պաշտամունքային կենտրոններ, այլև ունեցել են պաշտպանական կարևոր նշանակություն:

Արվեստի և ճարտարապետության տարբեր ոլորտներից թերևս միայն ուշմիջնադարյան խաչքարային արվեստի զարգացման մակարդակը կարող է կազմել նախորդ փուլի օրգանական շարունակությունը: Դրա վառ արտահայտությունն են Նորադուսի, Գետաշենի, Կամոյի, Մեծ Մազրայի և, հատկապես, Ջուղայի (Նախիջևանի ԻՍՍՀ) գերեզմանոցների խաչքարերը, որոնցում մի նոր փայլով և գունեղությամբ է դրսևորվում հայ քանդակագործական արվեստի վերելքը:

Առևտրի աշխուժացման հետ կապված զարկ տրվեց կամրջաշինությանը. կառուցվեցին կիսաշրջանագծային կամ սլաքաձև, մեկ կամ մի քանի ոչ լայն, կամարակապ բացվածքներով մեծ թվով կամուրջներ (Շատին, Տաթև, Աշտարակ, Օշական, Երևան, Գառնի):

Ժողովրդական ճարտարապետությունը բնութագրվում է Հայաստանի տարբեր աշխարհագրական գոտիների համար բնակարանների առանձին տիպերի մշակմամբ: Լեռնային և նախալեռնային շրջանների տնտեսությունների անասնապահական բնույթով և խիստ կլիմայով պայմանավորված՝ բնակելի կացարանի հիմնական տիպը եղել է գլխատունը (հաճախ գետնափոր), որի շուրջ դասավորվում էին մյուս շինությունները՝ գոմը, մարագը, հացատունը, մթերանոցը և այլն: Մի առանձին հմայք ունեն լեռնային այն բնակավայրերը, որտեղ տները աստիճանաձև տեղադրված են ռելիեֆի վրա, և շատ դեպքերում մեկի կտուրը հանդիսանում է իրենից բարձր գտնվողի համար ո՛չ պես բակ (Մեղրի, Խոտ, Շվանիձոր): Սյունիքի որոշ բնակավայրերում (Գորիս, Խնձորեսկ, Տեղ) պահպանվել են ժայռափոր կացարաններ, որոնք հաճախ խմբավորված լինելով և հաղորդակցվելով միմյանց հետ, կազմել են յուրօրինակ բնակելի համալիրներ:

Հարթավայրային գոտու բնակելի տները ավելի փոված են՝ բաղադրիչ մասերով խմբավորված բակի շուրջը և ունեն փայտաշեն հարթ ծածկ՝ հողե կտուրով: Դրանք խուլ երկայնական ճակատներով եզերում են փողոցը (ճանապարհը), որտեղից դեպի բակ է տանում լայն բացվածք (դալան): Օժանդակ և տնտեսական սենյակների մի մասը հաճախ տեղադրվում է թաղակապ նկուղային հարկում: Բակը, տնտեսական պատշգամբները, հարթ կտուրները հանդիսանում են լրացուցիչ տարածություն տնտեսության կարիքների, ներքին կյանքի կազմակերպման համար:

Ա. Ս. Գրիբոյեդովը 1819 թ. փետրվարին Թիֆլիսից Երևան անցնելիս գիշերել է Պիպիս (ներկայումս՝ Իջևանի շրջանի Ջողազ) գյուղում, որի տների հորինվածքի և կահավորանքի վերաբերյալ թողել է ուշագրավ տեղեկություններ. «Այստեղ օթևանում ենք սովորաբար խրճիթում, որ բավական լուսավորվում է դռան վերևի մի փոքրիկ բացվածքով. դռան դեմուդեմը՝ հետևի պատի մեջ օջախն է, խրճիթի երկու կողմում՝ կես արշին գետնից բարձր, տախտակներ են գցված, որոնք ծածկված են գորգերով. դրանց կողքին է մսուրը՝ ոչնչով չծածկված, ոչնչով չանջատված»:

1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմներից հետո պարսկական երկարատև լծի թոթափումը և Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորումը (1828 թ. Թուրքմենչայի պայմանագրի համաձայն) պայմաններ ստեղծեցին Հայաստանի այդ հատվածում նյութական և մշակութային կյանքի առաջադիմության համար: Հայ ճարտարապետության զարգացման այդ նոր փուլը (XIX դ.— XX դ. սկիզբ) համապատասխանում է կապիտալիս-

տական հարաբերությունների ժամանակաշրջանին, բնութագրվում ռուսական մշակույթի և ճարտարապետության հետ մերձեցման, քաղաքաշինության և ժողովրդական ճարտարապետության զարգացման միտումներով: Ռուսական մշակույթի հետ մերձեցման զորեղ փաստ է Հրազդան գետի ձախակողմյան բարձրադիր մասում գտնվող «Արարատ» տրեստի գինու մառանների ճակատի մակագրության մեջ հիշվող իրողությունը. «Այստեղ (նկատի է առնված մառանների տեղում գոյություն ունեցող Երևանի բերդը- Գ. Շ.) 1827 թվականին հեղինակի ներկայությամբ առաջին անգամ բեմադրվեց ռուս մեծ գրող Ալեքսանդր Սերգեևիչ Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» անմահ կոմեդիան»: Գրիբոյեդովը ոչ միայն իր ստեղծագործություններով, այլև իր քաղաքացիությամբ կարևոր դեր է խաղացել հայ ժողովրդի պատմական ճակատագրում՝ հանդիսանալով հայ-ռուսական բարեկամության ջատագովներից մեկը: Հայ ժողովուրդը Երեվան քաղաքում իր մեծ բարեկամի պատվին կանգնեցրած հուշարձանի պատվանդանին ջերմությամբ գրել է. «Ալեքսանդր Գրիբոյեդովին երախտապարտ հայ ժողովրդից»:

Քաղաքների (Երևան, Ալեքսանդրապոլ, Կարս, Նոր Բայազետ, Գորիս) մինչ այդ կատարվող տարերային և քաոսային կառուցապատումը հիմնականում տեղի տվեց կանխամտածված և հեռանկարային խնդիրներով տոգորված քաղաքաշինական քաղաքականության: Դրանց զարգացումը կատարվում էր գլխավոր հատակագծերի համաձայն, ուղղանկյուն հատակագծային սխեմայով, ռուսական կլասիցիզմի ճարտարապետության կնիքը կրող շենքերով: Կավակերտ Երևանը («Կավե տներ կավե հարթ կտուրներով, կավե փողոցներ, կավե հրապարակներ, վերջապես կավե արվարձաններ՝ բոլորը կավ ու կավ...») աստիճանաբար փոխեց իր դեմքը, դառնալով շատ թե քիչ տանելի պայմաններով «եվրոպական տիպի» քաղաք: Ընդլայնվեցին քաղաքի տարածքային սահմանները, առաջ եկան բնակելի նոր թաղամասեր, փողոցներ, հրապարակներ՝ առևտրաարհեստագործական շարքերով, զգալիորեն բարելավվեցին քաղաքի սանիտարական-հիգիենիկ պայմանները: Ալեքսանդրապոլը (Լենինական) դարձավ տիպիկ առևտրաարհեստագործական աչքի ընկնող քաղաք, ձեռք բերեց ռազմաստրատեգիական կարևոր նշանակություն:

Զարգացող կապիտալիստական հարաբերությունները իրենց հետ բերեցին նոր տիպի շենքերի (բանկային, հյուրանոցային, առևտրական, արդյունաբերական) անհրաժեշտություն, որոնք էականորեն փոխեցին քաղաքների դեմքը:

Իր տևողությամբ անհամեմատ կարճ այս շրջափուլը հանդիսացավ նախադուռը հայ ճարտարապետության այն շքեղ վերածնության, որ տեղի ունեցավ Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո:

Սոցիալական և ազգային ճնշումից հայ ժողովրդի ազատագրմանը նախորդող տասնամյակները եղել են ամենածանր, մղձավանջային, ահավոր զրկանքներով ու արհավիրքներով լի տարիներ: Թուրք ենիչերիները Արևմտյան Եվրոպայի պետությունների թողտվությամբ և լուռ հովանավորությամբ լուծում էին հայ ժողովրդի «լինել-չլինելու» խնդիրը՝ իրենց բնիկ միջավայրից բռնությամբ տեղահանելով Արևմտյան Հայաստանի ողջ հայ ազգաբնակչությանը և յաթաղանի զոհ դարձնելով 1,5 միլիոնից ավելի հայերի: Հայ ժողովրդի պատմության այդ ամենադժնի էջին է նվիրված Երևանի հյուսիսարևմտյան մասում՝ Ծիծեռնակաբերդի անտառապատ բարձունքում վեր խոյացած հոյակապ հուշահամալիրը: Դեպի կենտրոնի հավերժական կրակը խոնարհված 12 հսկայական մույթերով հորինվածքը՝ սերտորեն ներդաշնակելով հայ ժողովրդի մերօրյա վերածնունդը խորհրդանշող, դեպի երկինք մխրճված սլաքաձև կոթողին, իր խըստաշունչ և հանդիսավոր բնույթով ընկալվում է որպես քարացած եղերերգ եղեռնի զոհերի հիշատակին:

«Կոտորածի ու արյան այդ տարիներին թվում էր, թե քարաշատ Հայաստանի քարը չի բավականացնի գերեզմանաքարեր տաշելու համար.

Թվում էր, թե ծերունի մի քարտաշ կքանդակի մի վերջին գերեզմանաքար ևս, նրա վրա փորագրելով. «Աստ հանգչի Հայաստան...»:

Բայց այդպես չեղավ: Հոկտեմբերի մրրիկը ցնցեց ողջ աշխարհը, ցնցեց ու սթափեցրեց նաև մեր դարավոր հողը» (Գ. Էմին):

Հայաստանում սովետական կարգերի հաստատման անցած մոտ 70 տարիների ընթացքում լենինյան գաղափարների վերափոխող ուժը, որ դըրսևորվում է հայ ժողովրդի գործունեության բոլոր բնագավառներում, առավել ակնառու տեսանելի է նրա ծաղկուն ճարտարապետության մեջ: Սովետական Հայաստանի նորաստեղծ կառավարության հրավերով Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի քաղաքներից հայրենի երկիր վերադարձան տարբեր ասպարեզների աչքի ընկնող մասնագետներ՝ լծվելու երիտասարդ հանրապետության վերափոխման գործին: Դրանց թվում էր ճարտարապետության ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանը, որը կըրթություն, աշխատանքային փայլուն կոփվածք և արդեն լայն ճանաչում ստանալով ռուսական բարենպաստ միջավայրում, կոչված էր սովետահայ ճարտարապետության ռահվիրան լինելու: Քաղաքամայր Երևանի վերակառուցումը՝ ավելի ճիշտ հարությունը, սկսվեց 1924 թվականից, երբ գործողության մեջ մտավ Թամանյանի կողմից հմտորեն և բազմակողմանիորեն մշակված գլխավոր հատակագիծը՝ նախատեսված 15 տարվա համար՝ մինչև 150 հազար բնակչի հեռանկարով: «Տարածությունը պետք է դիտվի որպես ճարտարապետություն, այլապես մենք չենք ունենա ճարտարապետություն» (Ֆ. Լ. Ռայթ): Թամանյանը հենց այդպես էլ վարվել է քաղաքի գլխավոր հատակագիծը կազմելիս: Նա քաղաքը պատկերում է որպես Քանաքեռի, Նորքի, Սարի թաղի սարալանջերով կաղապարված, դեպի Արարատները բացվող բնական մի ամֆիթատրոն՝ ամբողջական կուռ օրգանիզմով, որի բաղկացուցիչ մասերը գտնվում են սերտ միասնության մեջ, օրգանապես կապված են միմյանց հետ և զերծ են քաղաքաշինական-հորինվածքային ներհակություններից: «Քաղաքը պետք է ունենա կանաչ գոտենման փողոցներ և այգիներ, առանց շինությունների, այսպես կոչված, «քաղաքի թոքեր», որոնցով մաքուր օդ է անցնելու դեպի քաղաքի կենտրոնը»— մարգարեաբար կանխագծում է մեծ ճարտարապետը: Ակամայից հիշում ես հանճարեղ Ե. Չարենցի բուռն պաթոսով գրված բանաստեղծական տողերը.

Նա տեսել է երևի արևային մի քաղաք...
Ինչպես մաքուր մարմարի կապույտ կողին նկարած
Արևային ժամացույց՝ քարտեզն ահա քաղաքի,—
Պողոտաներ, փողոցներ՝ բոլորաձիգ երկարած,
Իսկ կենտրոնում երկնահաս, գրանիտյա մի բագին,
Ակնթարթում մի վսեմ, որ երկարում է դարեր:

Անցնելով Թամանյանի անունը կրող պուրակով, չես կարող հպարտության զգացում չապրել՝ տեսնելով Երևանի գլխավոր հատակագծին հակված նրա հավերժացած սևեռուն, խորաթափանց հայացքը: Ամեն անգամ, երբ լսում եմ կամ հիշում Հեգելի հանրահայտ խոսքերը՝ «ճարտարապետությունը քարացած երաժշտություն է», առաջինը աչքիս առաջ հառնում է այդ արձանը: Թամանյանի վիթխարիությունն է պատճառը, արձանի կատարելությունը, թե Երևանի վեհությունը՝ դժվար է ասել:

Երևան քաղաքի թամանյանական տարիների վերափոխման ռիթմը շատ լավ է զգացել Մ. Գորկին. «Կառուցումն առաջին բանն է, որ աչքի է զարնում, երբ մոտենում ես Երևանին: Կարմրավուն ամպերի գլխարկով արծաթագագաթ Արարատի մռայլ զանգվածի ֆոնի վրա՝ գորշ քարերի այդ քաղաքը հեռվից ինձ վրա թողեց այնպիսի տպավորություն, որ նա պարփակված է շինարարական փայտամածների վանդակում, որոնց վրա բանվորների մրջնային ֆիգուրները նոր շենքեր են կերտում, ասես, անմիջապես բիբլիական լեռան զանգվածներին»:

Արդյունաբերության բուռն զարգացումը, ազգաբնակչության աննախընթաց աճը պահանջ առաջադրեցին մի քանի անգամ (1939, 1951, 1970 թվականներին) վերանայելու մայրաքաղաքի գլխավոր հատակագիծը: Ի պատիվ Թամանյանի պետք է ասել, որ այդ բոլոր վերանայումների ժամանակ էլ պահպանվեցին թամանյանական նախագծի քաղաքաշինական սկզբունքները և կարևոր մտահղացումները, ավելին՝ դրանք հուսալի ուղենիշ դար-

ծան քաղաքաշինական հետագա սերունդների համար: Թամանյանը եղավ Երևանի գլխավոր հատակագծի ոչ միայն հեղինակը, այլև դրա առաջին կենսագործողը: Նրա նախագծով մայրաքաղաքում կառուցվեցին ուսումնական, վարչական, հասարակական շատ շենքեր, որոնց մեջ իրենց հորինվածքային բարձր արժանիքներով, ազգային ճարտարապետության նորովի կիրառման և զարգացման հատկանիշներով առանձնանում են Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի շենքը և Լենինի հրապարակի զարդը կազմող Կառավարական տունը: Դրանց ծավալային լուծումները, հատակագծային կառուցվածքը կուռ են, միասնական, ճարտարապետական ձևերն ու հնարքները պարզ են, հանդիսավոր և մոնումենտալ՝ համահնչուն շենքերի նշանակությանը և շրջապատին, սրտամոտ ու մատչելի դիտողին: Վեր հառնելով երևանյան երբեմնի գորշ համայնապատկերում, դրանք հանդիսացան հուսալի կամուրջ դեպի հայ ճարտարապետության կենսունակ ու հեռանկարային ավանդները, լուսավորեցին արդիականի զարգացման ուղին: Կառավարական տան հորինվածքը, ճարտարապետական-գեղարվեստական մտահղացումները ընդհանուր առմամբ կազմեցին Լենինի հրապարակի վրա հետագայում կառուցված՝ «Արարատ» տրեստի, Միությունների, Կապի, «Արմենիա» հյուրանոցի շենքերի հորինվածքային հիմքը և թելադրողը, որի շնորհիվ հրապարակն իր ամբողջության մեջ միասնական է, առինքնող և հանդիսավոր: Այն սովետահայ ճարտարապետության ձեռքբերումների խորհրդանիշն է, մայրաքաղաքի քաղաքաշինական օրգանիզմի հորինվածքային միջուկը, սոցիալ-տընտեսական ու մշակութային կյանքի կենտրոնը, հայ ժողովրդի կենսագրության վերջին տասնամյակների բոլոր կարևոր իրադարձությունների վկան... Մի խոսքով՝ Լենինի հրապարակը մայրաքաղաքի, նաև հանրապետության բաբախուն սիրտն է: Դրա համար էլ թանկ է ու հարազատ բոլորիս:

Կազմավորվեցին և ավարտուն տեսք ստացան նաև Շահումյանի, Աբովյանի, Ազիզբեկովի, Սպանդարյանի հրապարակները, մեծ թվով մայրուղիներ, փողոցներ: Նախապատերազմյան շրջանում Երևանը հարստացավ մի շարք նշանակալից հասարակական շենքերով՝ «Սևան» հյուրանոցի, Գյուղբանկի, Ա. Մյասնիկյանի անվան պետական գրադարանի, Կենտրոնական հանրախանութի, «Մոսկվա» կինոթատրոնի, Բժշկական, Գյուղատնտեսական ինստիտուտների և այլն, որոնք սովետահայ ճարտարապետության կազմավորման և ռեալիստական ուղղության հաստատման շրջանի կարևոր նվաճումներից են: 1920—1930-ական թվականներին կազմվեցին նաև հանրապետության շատ քաղաքների, գյուղական բնակավայրերի՝ Լենինականի, Կիրովականի, Էջմիածնի, Ախտա (Հրազդան), Նոր Բայազետ (Կամո), Հոկտեմբերյան, Նորագավիթ, Վերին և Ներքին Շենգավիթներ, Փարաքար, Նորագյուղ և այլն, գլխավոր հատակագծերը, որոնք առաջին հերթին հատկանշական են գործառական գոտևորման, կենսապայմանների լավացման, տրանսպորտի կազմակերպման և այլ խնդիրների լուծման արդյունավետ որոնումներով: Այդ տարիներին սոցիալական կարևոր խնդիր էր հանրապետությունում բնակարանային պրոբլեմի լուծումը: Դա հատկապես հրատապ էր Երևանի և Էջմիածնի համար, որտեղ մեծ թիվ էին կազմում անտունները՝ մազապուրծ փախած թուրքական յաթաղանից, և Լենինականի համար, որտեղ 1926 թ. ավերիչ երկրաշարժը շատերին էր զրկել օթևանից: Բնակարանային շինարարության վերելքը հանրապետությունում սկսվեց հատկապես առաջին հնգամյակի տարիներից, երբ պրոբլեմի լուծումը սրությամբ դրվեց ողջ երկրի մասշտաբով: Կառուցվում էին ոչ միայն առանձին բնակելի տներ, այլև՝ ամբողջ թաղամասեր, ավաններ՝ կից արդյունաբերական ձեռնարկություններին:

Հայ ճարտարապետների գործունեությունը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին՝ նպատակամղված լինելով հիմնականում արդյունաբերական կարևոր օբյեկտների շինարարության և երկրի պաշտպանության հետ կապված խնդիրներին, նշանավորվեց սովետական հայրենասիրության թեմայի փայլուն մարմնավորումներով, որի յուրահատուկ դրսևորումներից են աղբյուր-հուշարձանների այն բազմապիսի հորինվածքները, որոնք կառուցվեցին

(և այժմ էլ կառուցվում են) Հայաստանի գրեթե բոլոր բնակավայրերում, խորհրդանշելով սովետական ժողովրդի մեծ սխրանքը:

1950-ական թվականների ստեղծագործական որոնումները հանգեցրին հայկական ճարտարապետական ավանդույթների նորովի կիրառման, հայ ճարտարապետների մտքի հասունության և բարձր վարպետության փայլուն դրսևորումների: Դրա ապացույցներն են՝ Մատենադարանի, ՀԿԿ Կենտկոմի, Կենտրոնական ծածկած շուկայի, ՀՍՍՀ ԳԱ նախագահության, «Արարատ» տրեստի գինու մառանների, Կոնյակի գործարանի, Բյուրականի աստղադիտարանի, Երևանի երկաթգծի կայարանի և շատ այլ շենքեր, որոնք կարևոր տեղ գրավելով մայրաքաղաքի քաղաքաշինական կազմավորման մեջ, սովետահայ ճարտարապետության անկյունաքարային ստեղծագործություններից են:

Հետպատերազմյան հնգամյակներում զգալիորեն վերափոխվեցին և քաղաքաշինական ծավալուն աշխատանքներով նշանավորվեցին Լենինականը, Կիրովականը, Ալավերդին, Արթիկը, Ղափանը, Սևանը, առողջարանային քաղաքներ և ավաններ Դիլիջանը, Արզնին, Ծաղկաձորը, Ջերմուկը: Լենինականում ամբողջացվեց և հասարակական-վարչական շենքերով կառուցապատվեց քաղաքի հասարակական կենտրոնը՝ Լենինի հրպարակը: Նոր հրապարակներ ստեղծվեցին Կիրովականում (Կիրովի, Շահումյանի), Ղափանում, Ալավերդում, Էջմիածնում: 1950-ական թվականների կեսերից առաջին պլան մղվեցին շինարարության տնտեսակարության, տեխնիկական կատարելության, ինդուստրացման և ինտենսիվացման խնդիրները: Ստեղծվեցին բնակելի տների, ուսումնական, մանկական հիմնարկների և զանգվածային շինարարության այլ օբյեկտների տիպային նախագծեր, որոնց կիրառման շնորհիվ անհամեմատ բարձրացավ շինարարության արդյունավետությունը: Այս շրջանում սովետահայ քաղաքաշինության բնորոշ կողմը դարձավ միջին և մանր քաղաքների զարգացման, արտադրական օբյեկտների հավասարաչափ տեղաբաշխման կուրսը: Հանրապետության քաղաքներում ծնունդ առան քաղաքաշինական բարձր կուլտուրայով և ինժեներական հագեցվածությամբ աչքի ընկնող բնակելի զանգվածներ (Աջափնյակ, Արարատյան, Զեյթուն, Նոր Նորքի, Ավան-Առինջի, Հարավարևմտյան, Նորաշեն՝ Երևանում, Անտառային, Ռռանկյունի՝ Լենինականում, Դիմաց՝ Կիրովականում, Սարալանջի՝ Աբովյանում, Վաղարշապատ՝ Էջմիածնում, Սանահինի սարահարթի՝ Ալավերդում, Սպանդարյան՝ Ղափանում և այլն):

Վերջին տասնամյակները հանրապետության ճարտարապետական-շինարարական կյանքում եղան բացառիկ արգասաբեր: Կյանքի ուղեգիր ստացան հարմարավետ, ռացիոնալ և արտահայտիչ հորինվածքներով շատ շենքեր՝ բնակելի, հյուրանոցային, հանդիսատեսային, ուսումնական, գիտահետազոտական, ցուցահանդեսային, տուրիստական, սպորտային, արդյունաբերական և այլ բնույթի: Սովետահայ ճարտարապետությունը որոնումների փուլից դուրս եկավ դեպի կայուն ընթացքի ճանապարհ:

Երևի Թամանյանի Կառավարական տնից հետո առավել խոշոր երևույթը սովետահայ ճարտարապետության մեջ Հայաստանի պետական ազգագրական թանգարանի շենքն է Սարդարապատում, որտեղ ՍՍՀՄ ժողովրդական ճարտարապետ Ռ. Իսրայելյանը շենքի արդիական էությունը վարպետորեն իմաստավորելով ավանդական արտահայտչամիջոցներով, հասել է ժամանակակից բարձր հնչեղության: Հայ շինարար ժողովրդին պատիվ են բերում մեր օրերի ծնունդ հանդիսացող այնպիսի կառույցներ, ինչպիսիք են՝ Սունդուկյանի անվան և Լենինականի դրամատիկական թատրոնների շենքերը, «Հրազդան» մարզադաշտը, «Դվին» և «Անի» հյուրանոցները, «Ռոսիա» կինոթատրոնը, Երիտասարդության պալատը, «Զվարթնոց» օդանավակայանը, Կամերային երաժշտության սրահը, «Էրեբունի» և «Մեծամոր» թանգարանների, Երևանի մետրոպոլիտենի կայարանների շենքերը, Սարդարապատի և Եղեռնի հուշահամալիրները, Սպորտայինհամերգային պալատը, Հայ ժողովրդի վերածնության համալիրը և շատ ուրիշներ, որոնք իրենց ոչ սակավ վիճելի ու մտորումների տեղիք տվող կողմերով հանդերձ, սովետահայ ճարտարապետության հաջողված և հեռանկարային գործերից են: Քաղաքա-

շինական տակտով և որոշակի արժանիքներով դրսևորվում են՝ Երևանի Գլխավոր պողոտան, Օղակաձև զբոսայգին, Լենինականում Արագածի, Սայաթ-Նովայի, Էջմիածնում Մյասնիկյան և այլ փողոցների կառուցապատումն ու բարեկարգումը:

Ճարտարապետական հուշարձանները ժողովրդի նյութականացված պատմությունն են, որոնք պատկանում են ավելի շատ ներկային, քան թե անցյալին: Դրանց պահպանությունը և գալիք սերունդներին անխաթար փոխանցումը դարձել է համապետական և համաժողովրդական գործ: Վերջին տարիներին հանրապետությունում մեծ կարևորություն է տրվում հատկապես հուշարձանների պատմամշակութային արդի նշանակության և դերի բացահայտմանը, ժամանակակից խնդիրներին ծառայեցնելուն, ծավալուն աշխատանքներ են տարվում պատմաճարտարապետական արժեք ունեցող ժողովրդական բնակելի տների և քաղաքաշինական կազմավորումների վերականգնման, օգտագործման և ժամանակակից կառուցապատումների մեջ ընդգրկման ուղղությամբ, որի արգասիք են արդեն ձևավորված՝ Լենինականի «Կումայրի», Երևանի «Ձորագյուղ», Դիլիջանի, Էջմիածնի արգելոց-թանգարանները:

Սովետահայ ճարտարապետությունը բազմադարյան հայ ճարտարապետության ժառանգորդն է, Մեծ Հոկտեմբերի արևով հարություն առած հայ ժողովրդի ազգային վերածնության ու ինքնահաստատման խորհրդանիշը, գալիքի նկատմամբ նրա վստահության ու վառ հավատի արհավատչյան:

Ռուս մշակույթի հիանալի գործիչ և հայ ժողովրդի ջերմ բարեկամ Սերգեյ Գորոդեցկին անկեղծորեն խոստովանել է. «Իմ մեծ հպարտությունն ու երջանկությունը եղել է և մնում է այն, որ ես Հայաստանում կարող եմ մտնել ցանկացած տունը և գտնել այնտեղ սիրալիր ընդունելություն և ապաստան»: Հյուրը հայի օջախում սպասված մարդ է: Իզուր չէ հայկական ժողովրդական առածն ասում. «Հյուրը աստծո պատվիրակն է՝ նա տեղ ունի մեր գլխին»: Դրանից է, որ հայը մի առանձին սիրով և անխառն հպարտությամբ է հյուրին ծանոթացնում հանրապետության նվաճումներին, նրա առջև բացում իր հոգու ծալքերը:

Հավատացած ենք, որ դուք սիրեցիք Սովետական Հայաստանը՝ իր անկրկնելի գեղեցկություններով, մշակույթի հուշարձաններով, արևային գույներով, ստեղծագործ աշխատանքի ու արարման բերկրանքն ապրող ժողովրդով, և ձեր հետ տանում եք հաճելի հիշողություններ:

Թո՛ղ ձեր սրտում արդեն բացված «հայկական անկյունը» միշտ վառ պահի կրկին անգամ «երկրային դրախտ» — Հայաստան այցելելու կրակը: Այդ հավատով էլ ձեզ հրաժեշտ ենք տալիս: Մինչև նոր հանդիպում:

«Если спросите меня, где на нашей планете можно встретить больше чудес, я назвал бы прежде всего Армению... Поневоле поражаешься, видя, что в таком небольшом уголке мира можно встретить такие памятники и таких людей, которые могут явиться украшением и гордостью всего мира».

РОКУЭЛЛ КЕНТ

Американский художник и писатель, лауреат Международной Ленинской премии «За укрепление мира между народами».

рмянская Советская Социалистическая Республика — одна из пятнадцати равноправных и живущих полнокровной жизнью братских республик Советского Союза — самая маленькая по площади (29,8 тыс. кв. км) и двенадцатая по численности населения (3,4 млн. чел.). Она занимает северо-восточную часть Армянского нагорья, в центре которого простирается Араратская долина — древнейшая колыбель экономической, политической и культурной жизни армянского народа. Не случайно именно здесь были расположены древние и новая столицы Армении: Армавир, Арташат, Ервандашат, Вагаршапат-Эчмиадзин, Двин, Эребуни-Ереван. Около 2/3 территории Советской Армении не пригодна для обработки и посевов, оставшаяся же 1/3, используемая для нужд земледелия, отвоевана ценой неимоверных усилий и громадных вложений. Верно говорят, что армяне «хлеб выжимают из камня». Предание гласит, что в момент, когда армяне предстали перед богом для получения своей доли земли, последняя была уже роздана, и им достались одни камни. Армянский народ вдохнул в камень жизнь, вложил в нее душу, в камне он выражал свои чувства и сокровенные мечты, камень принес ему известность и помог выжить...

На всей территории Советской Армении более 40000 архитектурных памятников, один прекраснее другого. А сколько их вне республики — на исконных землях исторической Армении! Какие памятники, какие творения человеческой мысли, щедрой души и могучих рук: Ани, Ахтамар, Хцконк, Оромос, Багаван, Багаран, Мрен, Текор... все не перечесть!

Кто только не стремился завоевать Армению: и ассирийцы, и римляне, и византийцы, и персы, и арабы, и сельджуки, и монголы, и турки... На протяжении всей своей многовековой истории армянский народ постоянно подвергался опустошениям и разорениям, чинимым иноземными захватчиками, однако малейшая возможность, самая кратковременная передышка использовались им для восстановления разрушенных памятников и строительства новых, еще более изумительных и великолепных. Этим и объясняется тот факт, что в Армении, расположенной в активной сейсмической зоне и веками лишенной государственности, несмотря на несметные вражеские нашествия и разрушительную силу времени, сохранилось и

дошло до нас из глубин веков огромное наследие. Поистине «музей под открытым небом»...

Памятники армянского зодчества, и сохранившиеся в целостном состоянии, и полуразрушенные, благодаря своему научному значению, высоким художественным достоинствам, яркому национальному своеобразию давно уже вышли за национальные рамки, удостоившись всеобщего признания и высокой оценки; они стали одним из важных источников изучения истории и культуры Закавказья и всей Передней Азии. В Армении зародились многие архитектурно-художественные композиции, конструктивные формы и приемы, которые впоследствии проникли в страны, с которыми Армения поддерживала экономические и культурные связи. Эти памятники и сегодня ценны с точки зрения изучения этих связей и взаимодействия культур.

Самый значительный подъем армянская архитектура пережила после установления Советской власти в Армении (ноябрь 1920 г.). Советская армянская архитектура, составляющая органическую часть армянского архитектурного искусства, — славная летопись нашей героической эпохи, достойная носительница созидательного духа и творческого гения армянского народа.

Не случайно поэтому наша республика привлекает к себе сегодня не только историческими памятниками, но и достижениями советской армянской архитектуры.

Разумеется, невозможно в столь ограниченных рамках представить многотысячные архитектурные памятники, расположенные на территории Советской Армении, хотя бы и самые значительные (число которых доходит до тысячи), поэтому мы постарались представить их в общих чертах, с емкими характеристиками, выделяя присущие им архитектурно-художественные особенности и достоинства.

Настоящий путеводитель адресован гостям Советской Армении. Нам кажется, он поможет ознакомлению с архитектурными памятниками Советской Армении, даст возможность сориентироваться при выборе туристических маршрутов.

В качестве напутствия гостям нашей республики хочется привести слова известного советского писателя Николая Тихонова: «Каждый должен хоть раз в жизни побывать в Армении. Там ждут его открытия и чудеса, которые оставят хороший след в его творчестве... И тот, кто хочет пережить незабываемые мгновенья, пусть, как в старые времена, пешком обойдет Армению... Он не пожалеет о содеянном».

Армения — одно из древнейших государств мира, ровесница Ассирии, Вавилона, Мидии, Парфии, Персии, Греции, Рима. И не удивительно, что обнаруженные на ее территории самые ранние памятники материальной культуры имеют почти 6000-летнюю историю. Пещеры каменного века, жилища энеолитического периода и бронзового века, мегалитические строения, наскальные изображения, могильники, укрепленные поселения — бердшены — все это свидетельства строительной деятельности племен, обитавших на Армянском нагорье.

Из всех древнейших поселений на территории Советской Армении особо выделяется Шенгавитское (IV—II тыс. до н. э.), обнаруженное в юго-западной части Еревана на берегу реки Раздан. Это поселение со своеобразной композицией жилых домов, с оборонительными и хозяйственными сооружениями, с четырьмя последовательно сменившимися богатыми культурными слоями дают четкое представление о непрерывной деятельности общины, существовавшей здесь тысячелетия назад.

Одним из древнейших центров металлургического дела в Закавказье является расположенное недалеко от села Тароник (Эчмиадзинский район) поселение Мецамор (III—I тыс. до н. э.). Его производственные, культовые постройки, жилые дома и богатый археологический материал свидетельствуют о высоком уровне литейного дела, культуры, ремесел, строительного искусства в Армении. Примечательны находки, связанные с астрономией. Результаты исследований этих находок подтверждают, что в 2800—2600 годах до н. э. здесь наблюдали самую яркую звезду — Сириус (появление которой связывали с наступлением нового года и поклонялись ей). О развитии астрономии в древней Армении свидетельствует существующий еще с 2492 года до н. э. Армянский подвижной (с 1084 года — устойчивый) календарь.

Памятниками той же эпохи являются обнаруженные на склонах горы Арагац и в бассейне озера Севан бердшены (Ором, Тгит, Гарнаовит, Лчашен, Цахкаовит, Сарнахпюр, Мотканаберд), сооруженные из крупных необработанных камней, так называемой циклопической кладкой. Поселения и бердшены были обеспечены естественной и искусственной защитной системой: располагались на окаймленных реками и ущельями неприступных холмах и скалистых возвышениях, окружались крепостными стенами с башнями, имели подземные ходы.

В эпоху бронзового века и неолита на Армянском нагорье получили широкое распространение мегалитические постройки: менгиры, кромлехи, дольмены (Зорац дашт — Войсковое поле в Сисиане, Шамирам, Ошакан). К ним же относятся единственные в своем роде памятники «вишапы» (драконы) — изображения рыб, высеченные на цельных камнях (длиною до 5 м) и покрытые символическими знаками. Они олицетворяли культ воды и устанавливались у истоков родников, вблизи каналов, водоемов (в Гегамских горах, на северо-восточном берегу Севанского озера, на склонах Арагаца).

В I тыс. до н. э. возникли и достигли большого расцвета такие значительные архитектурные комплексы, как Эребуни (Арин-Берд), Тейшебаини (Кармир-блур), Аргиштихинили. Они состояли из крепости и поселения, имели прямоугольную регулярную планировку с четкой системой застройки и уличной сети. Остатки Эребуни и Тейшебаини находятся на территории города Еревана, а Аргиштихинили — на возвышенностях близ сел Нор-Армавир и Айкаван в Октемберянском районе.

В 1950 году во время раскопок Эребуни было найдено каменное свидетельство о рождении Еревана, которое промолчав около 3000 лет, заговорило в наши дни на клинописном языке, удостоверяя, что Эребуни был основан в 782 году до н. э. царем Аргишти I (копию клинописного свидетельства можно увидеть на камне, установленном недалеко от площади Ленина). Следовательно, столице Армении — Еревану уже 2770 лет. В 1968 году торжественно отмечалось 2750-летие города и по этому поводу у подножия крепости был создан музей, представляющий посетителям археологический материал раскопок и богатую историю Эребуни. Прежде чем ознакомиться с крепостью, непременно посетите этот замечательный очаг культуры.

Эребуни был раскинут вокруг холма Арин-Берд, на вершине которого сохранилась цитадель, обнесенная по треугольному контуру крепостной стеной. Крепость состояла из четко выраженных дворцовой, культовой и хозяйственной частей. Примечательно, что официальные помещения открывались на панораму гор Арарат и Арагац. Жизнь в Эребуни продолжалась почти непрерывно, вплоть до современного Еревана, который унаследовал не только его богатую культуру, традиции, но и название — Эребуни-Ереван.

Если Эребуни был военно-административным центром, то Тейшебаини (VII—VI вв. до н. э.) имел преимущественно хозяйственное значение, о чем свидетельствуют расположенные на нижнем этаже двухэтажной цитадели складские помещения, комнаты для хранения

продовольствия, мастерские. Вызывают удивление просторные кладовые с изобилием карасов, имеющих колоссальную емкость (700—900 л), что говорит о высоком уровне развития садоводства и виноделия в Армении еще в IX—VII вв. до н. э. Об этом же повествуют ассирийские клинописи, упоминания греческих историков Геродота, Ксенофонта, Страбона, армянского историка V в. Агатангехоса и сведения о вывозе из Армении в большом количестве вина и сухофруктов. Доказательством этого высокого уровня служат также скульптуры Гарни, Двина, Звартноца и особенно нашедшие место в орнаментальном убранстве Ахтамарского храма барельефы, изображающие возделывание садов, изготовление вина, царские пиршества.

Падению Тейшебаини, наряду с опустошительными набегами скифов и коренных племен, в еще большей степени способствовал пожар, под пеплом своим захоронивший богатый археологический материал (в том числе остатки зерна, овса, винограда, плодов и т. п., которые в обычных условиях могли бы не сохраниться), обнаруженный во время раскопок в 1939—1970 гг. (в этом смысле Тейшебаини — это своеобразные «Армянские Помпеи»).

Аргиштихинили (основан в 776 г. до н. э.) в отличие от Эребуни и Тейшебаини, имел две цитадели с тремя рядами крепостных стен. Сведения об оборонительных, дворцовых и хозяйственных сооружениях города содержат многочисленные клинописи основателя города царя Аргишти I и его преемников.

Многие строительные традиции, градостроительные и конструктивные формы древнейшего периода, особенно высокая культура обработки камня, опыт выбора и подготовки местности для застройки, перешли в последующие этапы армянского зодчества.

В VII—VI вв. до н. э. с формированием армянской государственности при династии Ервандидов армянский народ вступил в новый этап экономического и культурного развития, которому, однако, помешало завоевание страны сначала Мидией, а затем — Персией.

Сведения об армянских народных жилищах этого периода содержатся в «Анабазисе» Ксенофонта. Согласно им, в южных районах Армении дома были башенного типа, а на севере — врытыми в землю, с отверстием в перекрытии, откуда проникал свет и через которое люди с помощью приставных лестниц входили в помещение (речь идет о простейшем, еще несовершенном прототипе народного жилого дома глхатуна, именуемом азарашеном).

В последние десятилетия III в. до н. э. Армения вступила в состав государства Селевкидов, оказавшись тем самым активнейшим образом вовлеченной в сферу влияния эллинистической культуры. Армянская государственность была восстановлена при основателе Арташесидской династии царе Арташесе I (189—160 гг. до н. э.). Особого расцвета достигла Армения в годы правления Тиграна Великого (95—55 гг. до н. э.), став одной из могущественных и передовых стран Древнего мира.

Небывалого подъема в этот период достигло градостроительство. Были основаны города Арташат, Армавир, Ервандашат, Тигранакерт, Вагаршапат и другие, в композиционной структуре которых использованы принципы эллинистического градостроительства. Согласно свидетельствам Плутарха и Страбона, в выборе места и закладке города Арташата («Армянский Карфаген») принимал участие, нашедший приют в Армении, карфагенский полководец Ганнибал. Сын Тиграна Великого Артавазд II (55—34 гг. до н. э.), сменивший отца на армянском престоле, по свидетельству Плутарха, был крупным представителем эллинистической культуры, автором речей, трагедий и исторических сочинений. В Тигранакерте и Арташате действовали театры эллинистического типа. В 53 году до н. э. во время торжеств, организованных по поводу мирного договора, заключенного с Парфией, в Арташате была поставлена трагедия Эврипида «Вакханки» на греческом языке.

Раскопками последних десятилетий в Арташате и Армавире выявлен богатый археологический материал, расширивший наши представления о границах распространения эллинистической культуры в Армении, подтвердивший письменные сведения об этих городах.

Одним из важнейших памятников эллинистического периода является крепость в селе Гарни (III—II вв. до н. э., Абовянский район), которая, по свидетельству отца армянской историографии Мовсеса Хоренаци (V в.), служила летней резиденцией Аршакидского царского двора.

Крепость расположена на живописном треугольном мысу, с двух сторон защищенном глубокими ущельями, а с северной стороны она была надежно укреплена неприступными стенами, сложенными из гигантских базальтовых глыб. Внутри крепости сохранились: языческий храм, остатки царского дворца, бани, жилых помещений. Наибольшую ценность, несомненно, представляет храм — единственный целостно сохранившийся памятник античности на территории СССР. Согласно греческой надписи на одном из камней крепости, храм построен в 77 году основателем Аршакидской династии царем Трдатом I, прославившимся своей преобразовательной и строительной деятельностью. Храм, представляющий собой периптер с колоннадой римско-ионического ордера, украшен восхитительным орнаментом, который, благодаря пластичности, сочности, жизненности, словно не высечен, а вылит в камне.

Храм был разрушен сильнейшим землетрясением 1679 года. В 1909—1911 годах экспедиция под руководством академика Н. Марра расчистила развалины. В 1930-е годы архитектор Н. Буниатян составил проект реставрации храма. Храм, пролежав в развалинах около 300 лет, благодаря восстановительным работам, проведенным в 1969—1974 годах по проекту и под руководством архитектора А. Саинян, предстает сегодня перед нами во всем своем величии.

Сила художественной выразительности Гарнийского храма заключается не только в истинных архитектурных и конструктивных формах, но и в гармоничной пропорциональной связи, существующей в общем композиционном построении и в отдельных деталях.

Одним из самых ранних и интересных образцов гражданского зодчества является Гарнийская баня, состоящая из пяти отделений (предбанника, купальных комнат и топки). Особую ценность бане придает пол предбанника, украшенный мозаикой. Тема мозаичного изображения взята из греческой мифологии. Привлекает внимание таинственная надпись, вплетенная в мозаику: «Работали, не получив ничего».

Среда Гарни — это восхитительное собрание архитектурных и природных памятников, состоящее из собственно Гарнийских памятников, а также Гегарда, Авуц-Тара, Ахджоцванка и, конечно же, знаменитого «Хосровского леса» (ныне Хосровский государственный заповедник). Последний является младшим современником Гарни, заложен в IV в. царем Хосровом II Котаком (332—338 гг.) для охоты и военных учений. Заповедник, благодаря неповторимому ландшафту, редким растительным и животным видам получил широкое признание.

